

ները՝ Վահանայ օրերուն, այլ՝ Վենետ. 1873, էջ 414, 443—446 հեն)։ Եւ անոր համար հաւանական է որ հոն սկսած էր նստիլ նաեւ «Հայաստանի Դուքսը» (Dux Armeniae, հմմտ. Եղիշէի վերոյիշեալ «սպարապետ Ստորին Հայոց»)։ Թէպէտ եւ ըստ ինքեան նաեւ այս Դուքս հրամատարութեան շրջանը բուն Ա. եւ Բ. Հայք եւ Պողեմոնական Պոնտոսն էր, անոր համար բուն տիրոջն էր «Դուքս Կրկին Հայաստաններու» (տակաւին Լեւոնի եւ Չենոնի օրով՝ 474ին՝ dux utriusque Armeniae), եւ թէ «Արեւելից Մագիստրիանոսի» ընդհանուր սպարապետութեան ներքեւ էր, առանձնապէս «Պոնտական քեմիս» կը վերաբերէր (Diocesis Pontica ի «Գիրք Աստիճանաց»)։ Յամենայն դէպս Հայաստանի բաժանման հետեւութիւն մ'ըլլալու է նաեւ այն որ Թէոդոս Բ. (413ի Սահմանադրութեամբ) ստեղծեց նաեւ «Պոնտական Կոմս» մը (Comes Pontica) ըլլալ նոյնը «Հայաստանի Դուքս»ը՝ որուն իշխանութիւնն աւելի տարածուեցաւ Պոնտոս բանակաթեմի վրայ (ըստ Seekf), ըլլալ այլազգ (հմմտ. Եւրոպ. «Եփրատայ Սահմանադրութիւն», Բ., դ, § 2 եւ այլուր)։ Թողոյ՞ որ ընդ մանրամասնութիւնքն, որչափ ալ հետաքրքրական ըլլան, այս անուանակոչութիւններէն եւ նոյն իսկ այն պարագայէն որ հայ զօրավարներ ալ հրամատար էին այս կողմերը, պէտք չէ կարծել թէ արդէն էսպէս հայ գունդեր էին՝ որ կը պահէին Սատաղն ու Մելիտենէն եւ նոր Հոռոմէասայաստանը։ Ընդհակառակը գիտենք որոշ որ ինչպէս յառաջ նոյնպէս «Հայաստաններու Դքսին» բանակն ամենամեծ մասամբ օտարերկրեայ զինուորներէ կը բաղկանար՝ որոնց այս սահմանադրուող պաշտպանութիւնը յանձնուած էր, թէեւ «սատար» զնդեր կ'առնուէին նաեւ տեղացիներէ, յատկապէս «հեծեալք աղեղնաւորք», «աղեղնաւորք Հայոց» են։ Նոյն իսկ «Լեզէոն Հայական Ա.» եւ «Հայական Բ.» (հմմտ. Ամմիանոս, Ի, Գ, 1) ուղղակի կապ չունին՝ իրենց կազմութեամբ՝ Ա. եւ Բ. Հայոց աշխարհաց բաժանման հետ, թէեւ արդէն Արեւելից Մագիստրիանոսի հրամանին ներքեւ։ Հայ զնդերը, որ ըստ գնահատուած էին կանոնաւոր, կը գործածուէին ըստ պիտոյից ամէն կողմ. «Թիւ (Ala) Բ. Հայոց» կայան ունէր Եգիպտոսի ուլասիսի մէջ անգամ։ Բուն նոր Հոռոմէասայաստանի մէջ ըստ տկար էր անգամ տեւական պահակազուղը, եւ աւելի էր՝ նախարարակոյս զօրքը (հմմտ. վերոյի-

շեալքն, եւ այլուր)։ Իրերը՝ հեռահեռէ՛ փոխուեցան աւելի յետոյ, յատկապէս «Հայկական Բանակաթեմի» ծագմամբ եւ զարդացմամբ։ Հայ զնդերու գնահատման ապացոյց կրնանք առնուլ նաեւ որ արդէն Չենոնի աստեւ «Վարժականք» (scholari) կամ կայսերական պալատան թիկնապահաց գունդը կ'ընտրուէր քաջակորովի Հայերէ (հմմտ. Պրոկոպ., Ծ, 3, ամ. Պատմ. ԻԴ, 16 հեն)։ Եւ նոյնպէս էր նաեւ յետոյ։ Այս ամէնը կը մեկնէ նաեւ Հայոց Արեւելեան Կայսրութեան մէջ խաղացած զերը՝ որ երթալով աւելի մեծ եղաւ, եւ յաճախ՝ նաեւ զերակշիւ։

(Շարունակելի)։

### ՄՈՎԱՅ, ԽԻՉԸՆԻ ԵՒ ՅՇՏԸԽԻ ՎԱՆՔԵՐԸ

Մովաց աշխարհը Ռչտունեաց սահմանակից է։ Խիչըն Աղձնեաց Գղեղ գաւառն է (աւելի տարածուն)։ Իր կարեւոր բաժանումներն են Սպա(ր)կերտ եւ Մամրտանք։ Իսկ Շատախն է Ջերմաձորը։ Այս վայրերու վանքերը Վասպուրականի վանքերու հետ նկատողութեան կ'առնուին, վասն զի ասոնք Աղթամարի կաթողիկոսութեան ենթարկուած են, դարձեալ ժամանակ մը Արժրունիներու հպատակած եւ յետոյ Վանի կուսակալութեան մաս կազմած։

#### 1. ԱԿՈՒՅ ՎԱՆՔԸ

Շատախի մէջ։ Ծանօթ է հետեւեալ յիշատակարաններէն։ «Փառք... զրեցաւ օս (Նարեկ) ի թուականին Հայոց ՋՂԸ (1549) ի յերկիրս Շատախոյ ի վանքս Ակէոյ<sup>1</sup> ընդ հովանեաւ սուրբ Սարգսի գաւրավարին եւ Հայոց Լուսաւորչին սուրբ Գրիգորիս ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսի Աղթամարցոյ ձեռամբ... Առաքել վարդապետի» (Ակիւնեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2088)։ Իսկ 1596ին Սրապիոն կրօնաւորը կը գրէ Աւետարան մը՝ «Ի յերկիրս Շատ(ա)խայ ի վանքն յԱկէոյ, ի դուռն սուրբ Սարգսի գաւրավարին, ի հէրպետութեան Սերապիոն

<sup>1</sup> Համանուն գաւառ մը կայ Վասպուրականի մէջ (հմմտ. Ինճիճեան, Ստորադրութիւն, էջ 163)։

կաթիկոսոսին» (Լալայեանց, Յուլ. հայ. Ջեռ. Վասպ., Ա., էջ 747)։ Ուրիշ Աւետարանի մը յիշատակարանը կը գրուի՝ «Ի Շատախ ի յԱկէոյ վանք ի դուռն սուրբ Սարգսի զօրավարին» (Անդ, էջ 808)։

#### 2. ԱԿՈՒՅ ԿԱՄ ԶՈՒՅ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՎԱՆՔԸ

Շատախ-Ջերմաձոր գաւառի մէջ, Կաղբի գիւղի մօտ (Նօտարք, էջ 168, ծն. 2 եւ էփրիկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Բ. էջ 263 եւ Ա. էջ 801)։ Աւետարանի մը արտագրութիւնը 1417ին կ'աւարտի՝ «Ի յերկիրս Ջերմաձորոյ ի վանքս Ակոոյ ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոսի Նախավկային» (Նօտարք, էջ 51 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ջեռ. Վասպ., էջ 300—304)։ Այս քանի մը տարի վերջը Ստեփանոս կը գրէ Աւետարան մը՝ «... յերկիրս Ջերմաձորոյ ի վանքս Փոքր Ակոոյ ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Դաւիթ կրօնաւորի...» (Նօտարք, էջ 168)։

#### 3. ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՆ ՎԱՆՔԸ

Սպակերտ գաւառակի ժամանք գիւղի մերձ շինուած է Ամենասուրբ Երրորդութեան վանքը, որ ունի լայնանիստ պարիսպներ, հաստատուն սրմեր եւ կամարակապ առաստաղ։ Ժողովրդական աւանդութեան համեմատ մէկ ու կէս դար յառաջ ունեցած է ճոխ անտեսութիւն եւ փոքրիկ միաբանութիւն։ Ունեցած է նաեւ բաւականաչափ հող եւ բուժարար աղբիւր մը։ Ուխտի օրը՝ Հոգեգալուստի կիրակին (Շէրենց, Սրբավայրեր, էջ 151—152)։

#### 4. ԱՄԵՆԱՓՐԿՁԻ ԿԱՄ ԾՊԱՏԻ ՎԱՆՔԸ

Մովաց աշխարհի սիրուած վանքերէն եղած է Ամենափրկիչ վանքը, որ կոչուած է նմանապէս Ծպատ<sup>2</sup>։ Շինուած է Մոզք աւանի արեւելեան կողմը՝ Առնջու ձորէն հիւսիս երկարող ձորակի մը մերձ բարձրացող լեռան լանջին։ Մոզք աւանէն մէկ ու կէս ժամ եւ Ատիճանց գիւղէն կէս ժամ հեռու է (Ազգր. Հանդ., 1912, Ա. էջ 99. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232)։ Ունի երկու եկեղեցի՝ նուիրուած Ս. Աստուածածնի եւ Ս. Կարապետի։ Երկուքն ալ իրարու կից են, ամուր,

կովիկ, ընդարձակ, սրբատաշ քարով եւ թաղակապ։ Ս. Աստուածածնի եկեղեցոյն հիւսիսային եւ հարաւային պատերուն կից կան հնդական կամարներ։ Ան սիւն չունի եւ երկնիկ է։ Դարպասը ամուր եւ ամփոփ շինութիւն մըն է, բայց խոնաւ ու մութ։

Հետեւեալ արձանագրութեան վկայութեան համաձայն 1570ին Ս. Աստուածածնի եկեղեցին նորոգուած է՝ «Շինեցաւ սուրբ եկեղեցիս ի թվին որ ի ՌԺԹ (1570) յառաջնորդութեան սուրբ ուխտին ի Ներսէս կաթիկոսոսապետին ուսթայ Յովսէփին, Աստուած զկամաւ ետես է... ցող պահէ տէր Ստեփաննոս...»։ Այսպէս կը կարգար այս արձանագրութիւնը Խաչիկ Լեւոնեան 1904ին (հմմտ. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232) մինչ Լալայեանց 1912ին հետեւեալ ընթերցուածն ունի՝ «Շինեցաւ սուրբ եկեղեցիս թվ. Հայոց ի ՌԺԹ. յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ներսէս կաթիկոսոսին, տէր Սարգիսին, տէր Խէրպետին, հաջ. Կարապետին, ուսթայ Յովսէփին, Աստուած զկամաւ ի...» (Ազգր. Հանդ., 1912, էջ 100)։

Ս. Կարապետի եկեղեցին միւսէն աւելի փոքր եւ նոր է, ինչպէս եւ ամուր ու հնդակամար առաստաղով։ Շինուած է 1704ին։ Ունի հետեւեալ արձանագրութիւններն՝ «Յիշեցէք ի Քրիստոս Ստեփանոս կաթիկոսոս եւ զմիտս Ստեփանոս եւ զմիտս Կոլաժիւրին եւ զԴրոշնց Կարապետին եւ զմիտս Նահապետին եւ զԴաւիթ եւ զտէր Աւետիսին եւ Կրկանց Աւետիսին, Գրիգորին, թվ. ՌՃԾԳ»<sup>3</sup> (Ազգր. Հանդ., 1912, էջ 100)։ Գարձեալ՝ «Ի հայկազեան մեծ թվականին եւ ի քսան եւ երեք յորեկանին եղեւ մոյ այլ ընմին (?) եղեւ շինումն այս տաճարին ձեռամբ մերոյ հայրապետին Դաւիթ եւ Յովհաննէս վարդապետին եւ որդի Խղաթին ՌՃԾԳ» (Ազգր. Հանդ., 1912, էջ 100. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232)։

Ամենափրկիչի վանքը ունի կոնդակ մը, որուն համեմատ հին հիմնարկութիւն է։ Յայտնաւորքէն քաղուած սոյն կոնդակը կ'աւանդէ թէ՛ Գասպար մոզք Յիսուս մանուկի փափկիկ մազերէն նուէր կը ստանայ եւ տեսեան մը վրայ երեք մոզքեր կը շինեն

<sup>3</sup> Այս արձանագրութիւնը «Բիւզանդիոն»ի մէջ (1904, Թ. 2232) գրուած է այսպէս՝ «Յիշեցէք ի Քրիստոս զՍտեփաննոս կաթիկոսոս, զմիտս Ստեփաննոս զմիտս Գոլաժիւր եւ Արշնց Կրպ. եւ Արիս. եւ զմիտս Խպ. եւ զԴաւիթ եւ զտէր Աւետիս եւ զԳրիկնց Աւետիս եւ զԳրգրն., թվին ՌՃԾԳ»։

<sup>2</sup> Բնաշխ. Բառարանի հեղինակը Ծպատ եւ Ծպատ կը նոյնացնէ (անդ, Բ., էջ 238)։

վանք մը, ուր ապա Գասպարի մարմինն ու իր ստացած մաղերը կ'ամփոփուէին (Աղգր. Հանդ., 1916, էջ 208. Բիւզանդիոն, 1900, Թ. 1127): Արդէն Վարդան աշխարհագիրն ալ գիտէ թէ՛ «Մոկաց դաւանն է իշխանանիստ, ուր կան բազում վանորայք, նախ Ամենափրկիչն, ուր կայ գերեզման թաղաւորին մոզուց Գասպարայ եւ սուրբ Վարդանայ եւ սուրբ Կանանց վանքն, որ այժմ ասի սուրբ Խաչ» (Saint-Martin, Mémoires, Բ., էջ 428. հմմտ. եւ Ինճիճեան շ. Ղ., Ստորագրութիւն, էջ 136 եւ Նոր Հայաստան, էջ 161):

Վանքին այդ կոնդակին մէջ կը պատմուէր զեռ՝ Մոկաց ժողովուրդը վանքին առաջնորդին յորդորներուն անսալով երեք օր Լէնկ-թիմուրի զօրքերուն առատօրէն կերակուր կը հայթայթէ: Բռնաւորն այս եղածէն կը զգածուի եւ կ'ուզէ առաջնորդին իր համակրանքը ցուցնել՝ անոր մէկ բաղձանքը կատարելու պատրաստակամութեամբ: Առաջնորդը կը խնդրէ՝ «Շնորհել նմա զայնչափ գերիս ի Հայոց, որչափ ինչ մարթ էր հաւաքել յեկեղեցի մենաստանիս եւ հաւաքեցան ի նմա սքանչելիօք 70 հազար գերիք, զոր ոչ կարէր տանիլ» (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 161): Այս գէպքին վրայ՝ «կոչեցաւ ապա մենաստանն Ամենափրկիչ» (անդ, էջ 161): Ամենափրկիչի մէջ 1369ին կը գրուի մեծագիր Մաշթոց մը՝ «Գրեալ յերկիրն Մոկաց, ի վանքն Ծպատ ընդ հովանեաւ սուրբ Փրկչին ձեռամբ Ստեփաննոսի ի թվ. ՊԺԸ (1369) յիշեցէք զՄարկաւազ քահանայն»<sup>4</sup> (Սրուանձանեան, Թորոս Աղբար, Բ., էջ 427): Իսկ 1395ին Կարապետ զրիչ յանձնառու ըլլալով Աւետարանի մը արտագրութեան իր խոստումը կը կատարէ «ի յանապատս Ծպատ ընդ հովանեաւ ամենազաղթ սուրբ Փրկչին եւ մաւր նորին Աստուածածնին Մարիամու եւ ձեռնադրողին իւրոյ Յովհաննու Կարապետին եւ այլ ամենայն սրբոց»: Կարապետ յիշատակագրութեան շարունակութեանը մէջ կը մագթէ յիշել՝ «զառաջնորդ սուրբ ուխտաւոր արքունաչէն»<sup>5</sup> «եկեղեցւոյս Ամենափրկչիս Ծպատայ վանից զտէր Յովհաննէս զաղբատասէր անձն» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 232—234):

Հաւանականօրէն վերոյիշուած Յովհաննէսի առաջնորդութեան շրջանին՝ 1413ին կը գրուի ձառնարկը-Տօնական մը, որուն յիշատակարանին մէջ կը կարդացուի՝ «Գրեցաւ սա յերկիրս Մոկաց ի վանքս Ծպատայ ընդ հովանեաւ սուրբ Փրկչիս ի հայրութեան տէր Յովհաննիսի հեղահողոյ եւ աղբատայսի» (Միւրմէյեան, Յուլ. հայ. Ձեռ. Հալէպի, Ա., էջ 270):

Միեւնոյն Յովհաննէսի օրով 1421ին Վարդան Թումայ կրօնաւորի համար կ'արտագրէ Աւետարան մը՝ «ի յանապատիս, որ Ծպատ կոչի» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 329—332): Երկու տարի յետոյ Թումայ կրօնաւորի խնդրանքին վրայ Կարապետ կը գրէ ձառնոց մը՝ «յարքունական յերկիրս Մոկաց ի վանքն, որ կոչի Ծպատ ընդ հովանեաւ Ամենափրկչիս» (Նօտարք, էջ 72. հմմտ. եւ Արծուի Վասպ. 1859, էջ 210 եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1127): Գրեթէ դար մը վերջը Ստեփանոս քահանան Յայտաւարք մը կը գրէ՝ «ի թվ. ՁՂԷ ի Ծպատ յուխտն Ամենափրկչի եւ սուրբ Կարապետի եւ սուրբ Աստուածածնին, ի հայրսպետութեան Գրիգորի փոքու. յիշեցէք զկրօնաւորան Ներսէս եւ Գրիգոր, որ կու աշխատին ի դուռն ուխտիս...» (Ակիւնեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. շ. Պոտուրեանէն): Ապա «Մատթէի մեկնութիւնը (Շնորհալիի) ... գրեցաւ... ի մեծ թուակառութեան Հայոց ՌԾԳ (1604) ի յերկիրս. Մոկաց ի մեծափառ եւ ի հրեշտակարանակ անապատս, որ Ծպատ վերածայնի ի դուռն սրբոյ Ամենափրկչիս եւ սրբոյ Կարապետիս ի դուռն եւ ի զշտալից ժամանակիս...: Արդ ի սոյն եւ ի յոյս ժամանակի եղեւ սկիզբն զըջութեան սորա եւ սոյն ամի կատարեցաւ ձեռնարկութեամբ հոգեւոր որդւոց մերոց Յովսէփի եւ Յովհաննէսի գրոց աշակերտացն, որ մինչդեռ առ մեզ էին ի վարժ ուսման զեղբակալ...» (Արարատ, 1888, էջ 293. հմմտ. Հանդ. Ամս., 1937, էջ 212):

Այս յիշատակագրութիւններն ու նախորդ արձանագրութիւնները Ծպատի առաջնորդներէն կը ծանօթացնեն Յովհաննէս, որ երկարատեւ առաջնորդութիւն կ'ընէ, Ներսէս, որ Ս. Աստուածածին եւ Դաւիթ, որ Ս. Կարապետ եկեղեցիները կը վերաշինեն: Բայց նկատելով յիշատակարաններու բովանդակութիւնն ու ձեռագիրներու արտագրութիւնները, նաեւ «նայելով Ամենափրկիչ վանուց գրութեանն եւ շուրջն զանուամբ այն բազմա-

<sup>4</sup> Ծանօթ է Յակոբ Ծպատեցի որ 954—965ին թուղթ մը կը գրէ (Արարատ, 1897, էջ 94):  
<sup>5</sup> «Աղբունաչէն» կոչուած ոչ թէ արքայէ մը հիմնուած ըլլալուն համար, այլ նմանութեամբ կամ յարաբերութեամբ Մոկաց երկիրն «արքայական երկիր կամ արքունական երկիր» յորջորջումին. հմմտ. յիշատակագրութիւնները:

թիւ աւերակ չէնքերին՝ հաստատապէս կարելի է ասել որ՝ դա նշանաւոր մի վանք է եղել Մոկաց աշխարհում եւ շատ հին հաստատութիւն» (Շէրենց, Սրբալսյեր, էջ 134):

Մոկսի առաջնորդը այս վանքին մէջ կը նստէր եւ ենթարկուած էր Աղթամարի իրաւասութեան: Հոգեպալուստի կիրակին ուխտաւորներու հոծ բազմութիւն մը՝ «անապատ»ին մէջ աղմուկ ու կեանք կը բերէր:

Ամենափրկիչ վանքը ունեցած է՝ ջրաղաց, ձիթահան եւ վարելահող ու անտառ: Հոգեւոր մեծ մասին Չոլի բէզ կը տիրանայ եւ վանքին անկումն ու աւերն աւելի զգալի կ'ըլլայ (Մուրճ, 1903, Թ. 12, էջ 80—81. Բիւզանդիոն, 1904, Թ. 2232. Շէրենց, Սրբալսյեր, էջ 134. Նօտարք, էջ 72):

5. ԱՆՋՂՈՒՅՑ ԿԱՄ ԱՆՋՈՂԱՅՑ ՎԱՆՔԸ

Մոկսի Անջղոնց թաղի եւ Դաշտ գիւղի Անջղոնց կամ Անջղոց ու Ս. Յակոբ եկեղեցիներու հովանիներու ներքեւ շատ մը ձեռագիրներ գրուած են եւ այս պարագան ենթադրելի կու տայ թէ այդ տեղերը փնտնելու է կամ լաւ քահանայատուն մը եւ կամ վանք մը (հմմտ. Բիւզանդիոն, 1903, Թ. 2295—2296. Նօտարք, էջ 226. Չարհանէլեան, Մատենադարան, էջ 155. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 198, 232—234, 737, 360, 904, 914, 211, 577, 637—639, 517, 557, 708—709. Մմբատեան, Գեղարքունիք, էջ 399. Ակիւնեան շ. Ն., Հաւաք. Յիշատ., 1614, 1646, 1654 եւն):

6. ԱՊԱՐԱՆԵՑ Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ

Մոկաց աշխարհի հարաւակողմը՝ Մամրոտանք կամ Մարմոտանք (Առանձնակ) դաւառի Ողիմ գիւղէն գրեթէ տասնուհինգ վայրկեան հեռու՝ Ապարանք գիւղի հիւսիսային կողմը բոլորածեւ դաշտի մը վրայ բարձրացած է Ս. Խաչի վանքը<sup>7</sup>:

Սոյն վանքի տաճարին շէնքի ձեւը կը նմանի Աղթամարի տաճարին՝ ըլլալով անոր

<sup>6</sup> Նաեւ բաւական շատ ձեռագիր արտագրուած է Բոնաչէն (հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ. է, էջ 484—486, 560. Կանայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Ներսէսեան զու., էջ 16 եւն) եւ Սեպ (հմմտ. Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 736, 816 եւ Մմբատեան, Երնջակ, էջ 309):  
<sup>7</sup> Հ. Ինճիճեան հաւատեալ չի կրնար ըսել թէ՛ այս վանքը Ս. Կանանց վանքէն տարբեր վանք ըլլայ (Ստորագրութիւն, էջ 136. Ապարանից վանքի մասին տեսնել նոյնին Նոր Հայաստան, էջ 162—163):

պէս խաչածեւ ու վիթխարի կաթողիկէով վերջացած, ներսէն կազմուած ըլլալով կղմխարներէ եւ գրակէն քարերէ (Բիւզանդիոն, 1904, Թ. 2294): Գեղեցիկ է եւ հոյակապ (Լուսայ, 1900, էջ 222): Նաեւ դարպասն ալ ընդարձակ եւ կամարակապ չէնք մըն է — հաստատուած չորս քարաշար սիւներու վրայ: Պատերը կղմխարներով եւ քարերով շինուած: Տաճարին<sup>8</sup> դուռը, որ բաւական յաջող ճարտարաբանութեամբ կը ներկայացնէ, իր ճակատին վրայ հետեւեալ արձանագրութիւնն ունի՝ «Ի թվականին քսան եւ մի յորեկան եօթ քառակ յարեակ ի նմին (1638) նորոգեցաւ դուռն սուրբ Խաչին ձեռամբ Լազ (?), վարդապետին» (Բիւզանդիոն, 1904, Թ. 2294): Տաճարին հիւսիսային պատին տակ կը ցուցուի բարձիկեկ թումբ մը, որ «Ջորիի գերեզման» կը կոչուի, վասն զի կ'աւանդուի թէ հոն թաղուած ըլլայ խաչարեր կամ խաչակիր ջորին (անդ):

Ապարանք ունեցած է քանի մը եկեղեցի: Նախապէս կառուցուած է լուսաւորչաչէն<sup>9</sup> Ս. Կարապետ, որուն մէջ ամփոփուած է մենաստանին առաջնորդներէն Դաւիթ սրբակեաց (Մոկաց) եպիսկոպոսը: Անոր յաջորդը Ստեփանոս ի պատիւ իր անուանակիր երանելիին կը շինէ սուրբ Ստեփանոս Նախապետի եկեղեցին եւ ապա Ս. Աստուածածնի մեծ եւ հոյակապ եկեղեցին եւ անոր հետ կը միացնէ միւսները եւ զանոնք ամէնքը խորաններով կ'օժտէ<sup>10</sup>: Այդ խորանները կը նուիրուին Ս. Առաքեալներու, Ս. Գրիգոր Լուսաւորչի, եւ Արղւմսէս վկային, եւ անոնց մէջ կը գետեղուին բացի նոյն սրբերու նշխարներէ, նաեւ Ս. Անդրէաս Առաքեալի, Ղեւոնդեան քահանաներու, Սերաստիայի Քառասուն Մանուկներու եւ Ատոմեան վկաներու մասունքները: Բայց նորակերտ տաճարին զարդն ու հոգեւոր հարստութիւնը կ'ըլլայ սուրբ խաչի անդին մասունքը (հմմտ. Տաշեան, Մայր Յուլիակ, էջ 879), զոր Յոյներու Վասիլ եւ Կոստանդին կայսրները Դաւիթ եպիսկոպոսի Մանդլաւտ եղբորորդւոյն կը պարգեւեն Մոկք բերելու համար. «Ապա փութարար եւ վազվազակի կազմեցին եւ

<sup>8</sup> Տաճարը 40 ոտք քառակուսի է, ունի հինգ լուսամուտ եւ զեղեցիկ զանդակատուն մը:  
<sup>9</sup> Այս երեք եկեղեցիներու, մասնաւոր սուրբ Աստուածածնի, ընդարձակ նկարագրութիւնը կ'ընէ Նախապետի (հմմտ. Մատենադարութիւնը Գր. Նարեկացւոյ, Վենետիկ 1840, էջ 380—387):

պատրաստեցին ոսկեկուռ ձուլածոյ քառատեսակ յորինմամբ զձեւ տեսակի աստուածեանն խաչի... Ի նմին կատուցեալ մասն հաստուածոյ ի կենսակիրէ փայտէ տէրունեան փառացն բազմականէ: Եւ վասն սուսեկ փառս ընծայելոյ նմին նշանի զընաւին վկայս կեցուցիչ մահուն վշտացն Յիսուսի ընդ նմին պատկանութեամբ զեղազարդեցին, ուստի ճաշակեացն եւ սփածաւ եւ սրակեցաւ եւ սեւեռապէս պնդմամբ մածուցաւ» (Մատենադրութիւնք Գր. Նարեկացոյ, Պատմութիւն Ապարանից Սաչի, էջ 379—380): Այս թանկագին մասունքը նախապէս Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ կը գտնուէր եւ ապա 983ին սուրբ Աստուածածնի եկեղեցոյ աւարտումէն յետոյ հանդիսարար հոն կը փոխադրուի: Այդ տօնախմբութիւններու կը մասնակցին Վասպուրականի երեք թագակիրները՝ Աշոտ Սահակ, Գուրգէն Սաչիկ եւ Սենեքերիմ Յովհաննէս եւ բազմաթիւ եկեղեցականներ<sup>10</sup>:

Ապարանից Ս. Սաչի պատմութիւնը կը գտնուի նաեւ անոր կոնդակին մէջ, որուն քաղուածոյքն է՝

«Եւ ընդ աստուածային օրհնութեան... ծախիւք սիրելիք վասն Ապարանից սուրբ խաչի պատմութեանց, նախ եւ առջ կէկեղեցի մի էր անուն սուրբ Կարապետին եւ Դաւիթ ճգնաւոր եպ. ի գերեզմանն էր ի մէջ խորանին եւ առաջնորդ վանից Ս. Ստեփաննոս, ուր ունէր զմանկիկ ճգնաւոր իւր սպասաւոր, ասէ ցնա սուրբ Ստեփաննոս, ա՛ն զվանից նշան եւ գնայ ժողով արա բեր... մտեալ խորան եւ ստեալ զհող գերեզմանից

<sup>10</sup> Այս հանդէսին եւ նմանապէս եկեղեցիներու նկարագրութիւնը, ինչպէս ակնարկուեցաւ, ճոռոմարանօրէն կ'ընէ Գրիգոր Նարեկացին, որ կը հիշէ ի պատիւ Ս. Աստուածածնի եւ սուրբ Սաչի ներքոյն մը, որուն վերջերս կը գրէ՝ «Եւ արձանացոյցի սմին անջինջ յիշատակ զանուն տենչալի ձերու՞մը կոչման տէր Ստեփաննոս լերինդ Մոկաց հօր պետ... Ես Գրիգոր յետին վարժապետաց եւ կրտսեր բանասիրաց, որդի գտեր եղբոր՝ Սանիայի հոգեկարգ եւ մտավարժ փիլիսոփայի եւ... ընծայեցի թումը եկեղեցաց զայս նուէր բանից ցանկալեաց...: Այդ քանդի անընդի զօրով տեսութեան բազմալի վայրէջք եւ սրբոյ խորանացը. զթերին լրութեան եւ զպահաս ածելութեան յարմարման զրութեանդ աղերսեմ շնորհել: Եւ ինձ տառապելոյս օղնեա աղօթիւք որ յարժամ զեգերեմ յընթեանուն...» (Գրիգորի Նարեկացի վանից վանականի մատենագրութիւնք, Վենետիկ 1840, էջ 422—423): Նարեկացոյ այս երկին խորագիրն է՝ «Յիշատակագրութիւն պատմութեան ամենազօր նշանի աստուածեան խաչին, որ ի վերուստ ամենահայեաց նախատեսն ակնարկութիւնէ ի սուրբին կողմանց կայից աշխարհի սպրազն Յունաց բերեալ հանդուցաւ ի սահման վայրից զաւստին Մոկաց ի շինուած բնակութեան ուխտին, որ կոչի Ապարանք» (Հմմտ. եւ թովմ. Արժ. Գամ., էջ 310):

ճգնաւորին եւ գնաց Ստամբուլ, յորում ժամանակին Կոստանդիանոսն էր թագաւոր եւ ունէր Բ. որդիս՝ Վասիլ եւ Կոստանդին եւ նոյն ամին մեռաւ Վասիլ եւ բազմութիւն քաղաքին գնացին ի թաղունն որդւոյն թագաւորին եւ առեալ մանկիկ զօրհնութեան հողն որ ի գերեզմանէ Դաւիթի եւ ետ ի վերայ մեռելոյն, առ ժամայն յարեաւ մեռեալն շնորհօքն Քրիստոսի: Ասէ ցնա թագաւորն ո՞ր երկրէ ես, նա ասէ Մոկաց Ապարանից վանուց. ո՞վ է ասէ առաջնորդ տեղւոյն, նա ասէ, քեռորդի իմ Ստեփաննոս. Ասէ թագաւորն՝ ինչդրեա, զոր ինչ կամիս տաց քեղ, ասէ մանկաւորին տուր ինձ հրաման երթալ հարցից զառաջնորդն վանիցն, զոր ինչ ինչդրէ ասացից քեղ: Մանկիկին ննջեաց ի ներքոյ ծառոյն միոյ եւ յերազի տեսեալ զսուրբ Ստեփաննոս, որ խրատեաց գնա ինչդրել Զ. Ե. մասն ի Քրիստոսէ... իսկ Քրիստոսի է մասն եղին յոսկեղօժ տապանն, մարդարտաշար յորինեցին եւ ջորոյ մի բնա մասունք բարձին եւ Բ. որդիք թագաւորին Վասիլ եւ Կոստանդին եկին ի վանք Ապարանից սուրբ Սաչին յերկոտասան հազար հեծելազօր զնօք եւ յաւազ Ուրբաթին հիմնարկեցին զեկեղեցին մինչեւ ի սուրբ Սաչ աւարտեցին եւ զհիմն ի վերայ սրբոց մասանց եղեալ կազմեցին եւ զանազան զարդս ահեղահարաշա շուրջ զնովաւ ամին եւ իբրեւ հարսն երկնաւոր թագաւորին Քրիստոսի պճնեալ զարդարեցին եւ ամենայն գեղեցկութեամբ որպէս ակնակապ ընդելուցեալ մարդարտաւ զօտի ընդ մէջ ամին եւ սուրբ ուխտիս Ապարանից սուրբ Սաչ անուանեցին եւ զարձան օրհնութեամբ զԱստուած ի տեղիս իւրեանց յըՍտամբուլ» (Նաթանեան, Արաօսը Հայաստանի, էջ 199—201):

Ապարանից Ս. Սաչ վանքի հիւսիսային կողմն է անոր քարուկիր ու կամարակապ ախոսը (պանդոկը), որուն դրան ճակատին վրայ գտնուած է հետեւեալ արձանագրութիւնը՝

«Ի թվականին  
Քսան երկու յորեկանին  
Եղեւ շինուին այս պանդոկին,  
Չեռամբ պիտակ Սիմէօնին,  
Դիտապետի այս մեծ ուխտին  
Արեամբ մածեալ սրբոյ խաչին՝  
Ի աշակերտի քաջ հոռտորին  
Աստուածարան Կարապետին.

Սա չէ ի թիւն բնականին  
Պաճարամիտ մեղօք ի լին  
Վասն այս շինեաց զայս տուն աղբին,  
Զի ախտք հողոյն իւր բուժեցին  
Թվ. Ռճ 1651» (Բիւզանդիոն, 1904, թ. 2294):

Կամարակապ եւ մատուանաձեւ չէնքի մը մէջն է մենաստանին աղբիւրը: Զայն Սիմէոն վարդապետը շինել տուած է<sup>11</sup>, իսկ ճարտարապետն եղած է Սաչատուր. «Շինեցաւ ձեռամբ մէրար Սաչատուրին թվ. Ռճ<sup>12</sup>»:

Յաւալի է որ Գրիգոր Նարեկացիի գրչով այնքան ներքոյնուած Ապարանից Ս. Սաչի վանքի մասին պատմական տեղեկութիւններ յետադայ դարերու մէջ այնչափ առատ չեն: Սոյն վանքին պատմականն ըրած ատեն — այժմ — կրկնութենէ խուսափելու դիտումով՝ չեմ ուզեր յիշել այն տեղեկութիւնները, զորոնք անոր նկարագրութիւնն ըրած միջոցին շարահիւսցի: Հաւանականօրէն անոր կամարներուն վրայ շատ մը փոթորիկներ ու դառն անցքեր կուտակուած են ու ծանրօրէն զանոնք հարուածած ու հեռացած, որ Նարեկեան չըջանին այնպէս պայծառացած եկեղեցին ու մենաստանն երկար զարիւր գրեթէ անտեսուած կը մնայ: Միակն է Մարիամ Տիկնանց տիկինը, որ անով կը սփոփուի (Հմմտ. Թովմ. Արժ. Պամ., էջ 310):

Յաջորդ գարեբէն հասած են հետեւեալ յիշատակագրութիւնները եւ տեղեկութիւնները: Արդ 1410ին հոս Աստուածատուր բահանան Աւետարան մը կ'արտագրէ՝

«Փառք... ոմանք քահանայք՝ անուն Ղազար եւ Անտոն... ետուն գրել զսա յիշատակ հողոց իւրեանց... Արդ զրեցաւ ի թուականիս Հայոց ՊՄԹ (1410) ի յերկիրս Մոկաց ի վանքս սուրբ Սաչ եւ ի սուրբ Կարապետի ի հայրապետութեան Տեառն Դաւիթ...: Այդչեմ զձեզ յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս գտեղապահ ուխտիս զտէր Գրիգոր հեղահոգին... եւ զՅովհաննէս հայրապետս ա-

<sup>11</sup> Ապարանից գիւղի եկեղեցին ալ, արձանագրութեան համաձայն 1664ին Սիմէոն վարդապետին հողատարութեամբ կառուցուած է (Բիւզանդիոն, 1904, թ. 2294):  
<sup>12</sup> Կը պատմուի՝ «... էր մօտ ի վանքն Ապարանից զեօղ մի Սօֆիոնոց Ագարուք անուն եւ բազում նեղութիւնս անցուցանէին ընդ արեղայան եւ կորէին հանապաղ զՆուրս վանացն եւ ոչ տային թոյլ հանդէլ նոցա», բայց աստի կը ծագրէին քրիստոնէական հասարակութիւնն ու ճէր (Հմմտ. Սրբանմանաց, շնոց եւ Նորոց, էջ 118—124): — Ապարանից Ս. Սաչի մօտ է Ս. Կարապետի վանքը (Նաթանեան, Արաօսը Հայաստանի, էջ 201):

ուաքինութեամբ լցեալ» (Լալայեանց, Յուց. հայ. Չեռ. Վասպուրականի, էջ 297—298): Թէեւ յիշատակագրութեան մէջ յատկապէս չէ նշանակուած «Ապարանից Ս. Սաչ», բայց սրովհետեւ Ս. Սաչ եւ Ս. Կարապետ իրարու շատ մերձ են, կ'ենթադրուի թէ Ս. Սաչով Ապարանից Ս. Սաչն է ակնարկուած:

Թովմաս Մեծոփեցիի Յիշատակարանին համեմատ Կիրակոս Վերապեցիի կաթողիկոսական ընտրութեանը թղթով կը մասնակցի նաեւ Յովհաննէս վարդապետ Ապարանցի (հրատ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1292, էջ 93): Այս Յովհաննէսի հետ չէ կարելի միացնել «Յովհաննէս Ապարանից (ից) վանից» (Հանդէս Ամս., 1891, էջ 308): Վերջինը Ապարաներէն է (Ապարաների Միարանոց եղբայրներու մասին հմմտ. Ալիշան, Սիսական, էջ 369—374):

Կարեւոր յիշատակարան է հետեւեալը՝

«Փառք... եւ արդ զրեցաւ սուրբ զիրքս ձեռամբ... փժոն զրչի Իգնատիոս արեղայի ի թուականիս Հայոց ՌԳ (1554) ի յերկիրս Մայեկաց ի սուրբ վանքս Ապարանից ի կաթողիկոսութեան Ախթամարայ տէր Գրիգորիսի եւ ի հէրպետութեան սուրբ ուխտիս Ապարանից արհեստիսկոպոսին տէր Վարդանին, որ լաւ ընդունելութիւն արար մեզ եւ ի մարմնական զործոց եւ ի յայլազգեացն պահեաց զմեզ. տէր Աստուած տուիչն բարեաց տացէ սմա զիւր անձառ բարիս... ի դառն եւ ի նուրբ ժամանակի... վասն զի հանց սաստիկ մարախ եկաւ, որ ի բազում տեղիս գետինն ոչ երեւէր եւ եկեր զամենայն վարսակս զարտոյ, զպարտիզոյ եւ զպտուղս այգոց եւ զխոտս անասնոց. եւ զեռ կա(յ) յամենայն տեղիս: Եւ զարձեալ ելաւ խոնդքարն ի Սարմբուլայ բաղում զօրաւք մինչ էձ եւ այլ աւելի ասեն եւ զայ բռնութեամբ ի վերայ աշխարհիս Հայոց եւ եկեալ հասեալ ի Մանգկերա եւ Եաս Դամոպ պարոնն Թաւիկոյ ի Սորասանայ անթիւ հեծելօք ժողովեալ է ի Նախչրան եւ կայն հակառակ ընդ միմեանս եւ զվերջն ոչ գիտեանամ: Բայց զհուսութիւն եւ փառք արարչին Աստուծոյ, որ զինչ ասնէ զմեզ խրատէ: Եւ զարձեալ սաստիկ սող է ի բազում տեղիս, որ կապիձ կարեկն է ութմանի է եւ ցորեան եւ զարի ուրեք դտանի...: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս ամենայն սրբոց բարեխօսութեամբն ողորմեա համօրէն եղբարցս տէր Վարդան եպիսկոպոսին եւ Սաեփաննոս եւ Մարգրիտ եպիսկոպոսին»

ապն, տէր Արսէն եւ տէր Վարդան մահաւորացն, տէր Սիմէոնին եւ տէր Կիրակոսին, տէր Կարապետին եւ տէր Արրահամին, տէր Ղազարին եւ տէր Յովաննէսին եւ սարկաւազացն Ընխտակէսին, Դաւթին եւ Յակոբին, մշակացն եւ տնտեսին, որ կու աշխատին ի գրունս սուրբ Նշանին Ապարանից, տէր Աստուած առնէ զսոսա մշակ առանց ամաւթոց...: Եւս առաւել զգեաւորի քահանայքն զտէր Հէրապետ եւ զտէր Յովաննէս, զտէր Գրիգոր եւ զմիւս տէր Հէրապետ, զըռէս խալիֆայն եւ զիւր եղբարքն եւ զտանուտէրքն զամենայն: ... Եւ արդ կացցէ սուրբ զիրքս ի գրունս Ապարանից սուրբ Նշանին ձեռամբ Վարդան եպիսկոպոսին եւ այլոցն ամենայնի: Գարձեալ սորմեացի տէր Աստուած ննջեցեալ եպիսկոպոսացն Թումայ եպիսկոպոսին եւ այլոցն ամենայնի ամէն: (Գրած է ի խնդրոյ տէր Արսէնին եւ եղբորն Ներսէսին եւ քուերն Մանուչակին): Ապարանից վանքին առաջնորդն է 1580ին Թումաս արքեպիսկոպոսը, ինչպէս կը վկայէ Կիրակոս, որ հոն Աւետարան մը կ'արտագրէ՝ «Գրեցաւ սուրբ Աւետարան յերկիրս Մեմրոտան ի սուրբ հոգակաւոց ուխտս Ապարանաց ընդ հովանեաւ կենսատուր սուրբ Խաչին Քրիստոսի եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Կարապետին եւ այլ սրբութեանցս որ աստ կան հանդուցեալ, ի յառաջնորդութիւն տէր Թումայ... արհիւկապիսկոպոսի» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ. ի, էջ 692—693): Նոյն Կիրակոս, զարձեալ Թումայ արքեպիսկոպոսի անօրհնորդութեան օրով 1584ին կը գրէ ուրիշ աւետարան մը (հմմտ. Հայաստան, 1847, Թ. 12—65):

Այս շրջաններուն կ'ապրէր անուանին Սիմէոն Ապարանեցի Վիպասանը, որ Ապարանը գիւղէն յորջորջուած է Ապարանեցի: Խ. Լեւոնեան (Բիւզանդիոն, 1904, Թ. 2383) գինքը Ապարանից վանքի առաջնորդ կ'ենթագրէ՝ անշուշտ հիմնուած ըլլալով պարզապէս Ապարանեցի յորջորջանքին վրայ: Հ. Ակինեան, որ ընդարձակօրէն Սիմէոնի մասին գրած է, այս հաւանական չի գտներ (հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1919, էջ 81): Սոյն Սիմէոն<sup>13</sup> ընդարձակ տողեր նուիրած է Ապարանից սուրբ Նշանին: Իր վիպասանութեան վերջը հրատարակուած է «Յիշատա-

<sup>13</sup> Սիմէոնի մասին հմմտ. նաեւ Ալիշան, Հայաստան, էջ 127—128: Սիմէոն միաբան է Ապարանից վանքի, ինչպէս ինքն ալ կը հաստատէ հմմտ. վարդ:

կարան Շարաղրութեանս եւ Պատմութիւն Ապարանից սուրբ Նշանի», որ կը սկսի «Ի թիւ հազար եւ հարիւրոց, կատարեցաւ բանս պատմագրոց»: Հ. Ն. Ակինեանի կարծիքով (անդ, էջ 85) այս յիշատակարանը կարելի է վիպասանութենէն անկախ գրութիւն մը նկատել: Այդ գրութենէն յառաջ բերենք կարելոր մաս մը՝

«... Չմեկ բնակեցոյց յայտնոյս ծովի Հանդերձ ծնողօք յԱղիւտի  
Ի Սեփհական երկրէն ելեալ  
Ըստ հին կոչման անուն Աղցնի:

Որ մերձակայ է ի Կորդիս,  
Եւ Կորձէից տան դրացի  
Պատըսպարեալ Տեառն խնամօք՝  
Ըստ Նարեկայ Գրիգորիսի:

Յելից տարւոյն մինչեւ ի մուսս  
Աջ անդին է հովանի.  
Եւ բնիկ գիւղն իմ Ապարանց  
Ի յԱրձրունի զարմէն շինած:

Յարեւելից տանէն եկած  
Ի լեռնոտին եղին կացած.  
Ի նոյն ցեղէն շառաւիղեաց  
Եպիսկոպոսն սրբասաց:

Դաւիթ յողգէ թաղաւորաց  
Սքանչելագործն ի մէջ աղանց.  
Այն որ հող սուրբ գերեզմանին  
Չարհուրեցոյց զիշխանս Յունաց:

Ի ձեռն սուրբ ճշնաւորին  
Մանկիկ ի նոյն զարմէն սիրած.  
Ի հոյակապն յըՍտամպոլ  
Յականաւորն տիեզերաց:

Յորմէ հարցեալ զինգիրս կամաց  
Դաին զոյիցս անկարօտած.  
Կենաց փայտին էր փափաքած՝  
Անմահ գանձին խնդիր ելած:

Ստեփաննոսի թղթով աղղեաց  
Ի ձեռն ժիր սուրհանդակաց,  
Կրկին տեսին զհրաշ փառաց  
Վասիլ՝ Կոստանդն իշխանքն օժած:

Ձի մինչդեռ էր մեծամեծաց  
Ի գիւանին խօսս պարապած.  
Եկեալ կացին սուրհանդակքն  
Պատմեն զպարգեւս խնդրողաց:

Ստեփաննոսէ գոլ ուղարկած  
Ի նոյն ժամուն ուղեւորած.

Յորմէ առեան եղև աիշած,  
Ընդ սքանչելացն հիացած...:

Տարաշխարհիկն եղև պատուած,  
Յոսկիակազմ աթոռ բազմած,  
Իւր աղղայնոցն ընծայ շնորհեաց  
Ստեփաննոսի Տեառն փառաց:

Մասունս եօթն ի Քրիստոսէ  
Եւ յայլ սրբոց չորեքտասանց  
Հանդերձ զօրօք բերաւորօք  
Բերեալ եղին վայրս Մայեկաց:

Մեծ ուրբաթին հիմնարկեցին  
Օծուսն եղև ի Խաչիկերաց.  
Եկեալ ի տես մեծ իշխանաց  
Սենեքարիմ եւ այլ եղբարց:

Ակուսք առեալ (հ)օրնեղութեանց,  
Նոր եղանակ երգեն հնչմանց,  
Գովեն զխաչն պարծանաց.  
Կենարարի արեամբ ներկած:

Եւ ընդ նմա զայլ սուրբ մասունս  
Չչորեքտասանս հաւաքած  
Եղին տաճարն Աստուածածնին՝  
Չորդին ի մայրն յաւանդ տըւած:

Չվկայսն չարչարանաց  
Եւ սուրբ նշխարս նահատակաց  
Ձի միասին ուրխացած.  
Մայրն եւ որդին ընդ սիրելեաց:

Շինեալ զտաճարն յորձաքարաց,  
Չանապանեալ ի ճարտարաց  
Ոսկենրկար զմէջն ծաղկած՝  
Քանդակագործ ծովացուցած...:

Ի սուրբ խորանն է հանդուցած  
Աստուածածնին կայ եղած  
Ի գիրկ ծնողին որդին զգուած՝  
Հանդերձ զասիւք սպասաւորաց:

Ի Թումայի դրոց պատմութեանց՝  
Ճշմարտութեամբ է ստուգած,  
Ի Գրիգորէ Նարեկացոյ  
Կրկին զճառս հաստատած:

Ի հնազէտ նախնի Արանց  
Աւանդութեամբ առ մեկ հասած՝  
Թէ լուսատուն Հայաստանեայց  
Սուրբն Գրիգոր ի Պահակաց:

Նախ աստ տաճար նա հիմնարկեաց,  
Սուրբ Կարապետ զանուն կնքեաց,

Յորմէ (յորուժ) Դաւիթն կայ թաղած  
Ի հարաւոյ կուսէ եղած...:

Արդ յայտնիս պայծառ յուխտէ,  
Չոր ծանուցաք փոքր ի շատէ  
Նուսաս ողիս ի նմանէ է  
Վերջին ծնունդս յԱղձնեաց տանէ...:

Չաշխարհն մեր օտար ուսէ  
Եւ մեք կացեալ ի հեռաստանէ.  
Մեր բնակութիւնն աւերակ է  
Եւ ի յարկս մեր ոչ ոք բնակէ...:

Դրունք տաճարին Տեառն ի սուր է,  
Ձի ուխտաւորքն ոչ ոք է.  
Անդ ելս եւ մուսս աղուէսն առնէ  
Որպէս ծանոյց Երեմիէ...:

Սիմէոն վիպասանի վերջին տողերուն համաձայն շատ աղաւաղելի եւ տխուր էր վանքին վիճակը<sup>14</sup>, բայց բարեբաւորէն վերականգնումին կը ձեռնարկէ Սիմէոն Փոքր Ապարանեցի եւ մեծ ջանքերով կը յաջողի<sup>15</sup> (Հանդ. Ամս., 1919, էջ 82—83. Աղաւնունի, Հայ Երուսաղէմ, էջ 472):

Վերանորոգուած վանքին Ս. Խաչի հովանիին տակ 1673ին Վարդան Աւետարան մը կ'արտագրէ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 942) եւ 1691ին Աւետարան մը՝ «Գրեցաւ եւ աւարտեցաւ ի գիւղաքաղաքն որ կոչի Ապարանց ընդ հովանեաւ սուրբ Խաչին եւ ի մասանց Քրիստոսի, որ անդ սպասու սուրբ Խաչին կան հաւաքեալ եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Յովհաննու Մկրտչին եւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին (ի թվականիս Հայոց ՌձԽ, Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Լալայեանցի Ձեռագրաց անտիպ. ցուցակէն անուած): Քանի մը ատրի վերջը՝ 1698ին Նահապետ հոս կ'աւարտէ Աւետարանի մը գրութիւնը (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 980): Իսկ 1762ին Յովհաննէս գրիչ «յանապատն Լմայ ընդ հովանեաւ սուրբ Գէորգայ» կ'օրինակէ՝ «զմեկնութիւն սահմանաց Առաքելի, ՌՄԺԱ թուին, որ երեւեցաւ հրաշս սքանչելի Ապարանից սուրբ Խաչի վանքն, որ նոր կերակին լոյսն յայտնապէս իջաւ ի վերայ սուրբ

<sup>14</sup> Սիմէոն վանքին աւերումին ու անջրացումին պատճառները լուրջեամբ կ'անցնի, մինչ անոնց ծանօթութիւնը բազմալի է:  
<sup>15</sup> Փոքր Սիմէոն 1647ին Աւետարան մը կը ստանայ (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 600—602):

Խաչին մինչև Համբարձումն, գրչեր եւ ցե-  
րեկ կայր ի վերայ սուրբ Խաչին» (Ակինեան  
Հ. Ն., Հաւար. Յիշատակ. էջմիածին, 859):

Մեկի ծանօթ վերոյիշեալ արձանագրու-  
թիւններու եւ յիշատակագրութիւններու մէջ  
զժրախտարար Ապարանից վանքի առաջ-  
նորդներէն շատ քիչներուն անունները նշանա-  
կուած են: Բայց անոնց բովանդակութիւնը  
կը հաստատէ թէ՛ սոյն վանքը սիրուած եւ  
հոգակուած վայր եղած ըլլայ (Հմմտ. եւ  
Սրբանձտեանց, Մանանայ, էջ 387): Առա-  
տաձեռն Հայր անոր ընծայած է շատ բան<sup>16</sup>:  
Ունէր 27 մեծ արտ եւ ջրաղաց մը եւ շատ  
ձեռագիր (Աշխատանք, 1914, Թ. 37. Արա-  
րատ, 1911, էջ 975): Սակայն ցաւ է տես-  
նել, որ այսպիսի վանք մը «Հայոց իրաւասու-  
թենէն հետ նոյն կողմի Քիւրտերէն Օսման  
աղայի որդւոց Հասան եւ Ապուլ Բահման  
անուն Բրտաց աղարակ եղած է» (Փունջ,  
1877, Թ. 1145 եւ 1167. Լուսնայ, 1900,  
էջ 222. Հմմտ. նաեւ Մշակ, 1878, Թ. 187 եւ  
Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, էջ 238—240  
եւ Բաղմալէպ, 1900, էջ 108—109): Նոյն  
խի խոտի մարագ եղած է եւ 1895ին Սիդի  
Ս. Խաչի եւ Տիւրուչքի վանքերու հետ  
միկիթի եւ ապա՝ ախոտի վերածուած  
(Սրբանձտեանց, Համով Հոտով, էջ 89.  
Արարատ, 1896, էջ 90. Տարեցոյց 1914ի  
հրատ. աղ. ուս. միութեան, Կ. Պ., էջ 206<sup>17</sup>.  
Հմմտ. նաեւ Շէրենց, Սրբավայրեր, էջ 136.  
Աշխատանք, 1913, Թ. 31—127):

7. ԲԱՉՆԻՑ ԿԱՄ ԲԱՉՆԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ  
ՎԱՆՔԸ

Սպակերտի համանուն գիւղի հիւսի-  
սային արեւելեան կողմը, անկէ 10 բուլէ հե-  
ռու, դաշտի մը վրայ: Եկեղեցւոյն լայնու-  
թիւնն է 30 ոտք եւ երկայնութիւնը՝ 35 ոտք,

<sup>16</sup> Վանքերը շատ բան ունեցած են, սակայն  
անոնք սակայ գոգութեան եւ կողոպուտի ենթարկուած  
են, ինչպէս մեր գրուածքն անանուցած: — Յաւե-  
լուք դեռ՝ 1840ին Յուսիսայն որդւոց վանքէն՝ Գարբիէլ  
վարդապետի անշուքեան ժամանակ 100-000 գրուէն  
ուսելի ապրանք կը գողցուի (Թ. 703 Չեռագիր [Նամա-  
կանի] Վիենն. Միթթ. Մատենագրարանի, էջ 154) եւ  
Արտաղի Ս. Քաղէի վանքի վարապետը կը հեռացուի  
ու կը ծախուի (Բաղմալէպ, 1930, էջ 306): Սոյն  
վանքէն եկեղեցական շատ մը առարկաներ էջմիածին  
փոխադրուած են. հոն տարուած է նաեւ Շամբի Ս. Նա-  
խավիպի վանքէն եպիսկոպոսական խոյր մը եւ այսպէս  
յափշտակութենէ փրկուած (Արարատ, 1895, էջ 266  
եւ 313):

<sup>17</sup> Նոյն Տարեցոյցին մէջ, ինչպէս Ապարանից  
վանքի, նաեւ Վասպուրականի ուրիշ քանի մը վանքե-  
րու պատկերները գրուած են:

ունի մէկ խորան եւ երկու լուսամուտ: Նախ  
հայ ընտանիք մը անոր կը տիրանայ եւ յետոյ  
Քիւրտերը զայն կը յափշտակեն ու կ'աւերեն  
(Արեւելք, 1889, Թ. 1748. Լուսնայ, 1900, Ա.,  
էջ 228. Արարատ, 1896, էջ 246. Բնաշխ. Բա-  
ռարան, էջ 371 եւ Շէրենց, Սրբավայրեր,  
էջ 152—153): — Գուցէ հոս գրուած ըլլայ  
1371ին Աւետարան մը (Թօփճեան, Յուլ. ց.  
հայ. Չեռ. Դաղ. Վ. ի, Ա., էջ 51—52):  
Նաեւ հոն գրուած պիտի ըլլան ուրիշ քանի  
մը ձեռագիրներ (Հմմտ. Ոսկեան Հ. Հ.,  
Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս,  
Վիեննա 1940, էջ 351): — Յայտնի է թէ հա-  
մանուն վանք մըն ալ կայ Թիմարի մէջ (Հմմտ.  
անդ, էջ 349): Գուցէ այս վերջնոյն հետ նոյն  
ըլլայ Ամենափրկիչ վանքը (Աշխատանք,  
1913, Թ. 28—124), որուն մասին յետա-  
գային:

8. ԲԱՐԱԿԱՉՈՐԻ ԿԱՄ ԲԱՐԻՉՈՐԻ ԿԱՄ ԲԱԼԻՉՈՐԻ  
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ Է. ԽՈՐԱՆԱՅ ՎԱՆՔԸ

Խիզանի Փաշաոսր գիւղի հարաւակողմը  
(Լուսնայ, 1900, էջ 222), Շէն եւ Բրունց գիւ-  
ղերու մօտ (Նօտարք, էջ 78, ծն. 1), Բարի-  
ձորի մէջ, Հիզան հին քաղաքէն գրեթէ եօթը  
վերստ հեռու դէպի հարաւ-արեւմուտք խիտ  
ճառատունկներով պատուած Զիւլանի ուր-  
բապտոյտ ձորի սարահարթին վրայ հանդէս  
է Բարակաձորի կամ Բարիձորոյ կամ է. խո-  
րան Ս. Աստուածածնի վանքը: Առաջին ա-  
նունն առած է գտնուած վայրէն, իսկ երկրորդ  
կոչումը, վասն զի եօթը խորան ունի:

Մարդկային աղմուկէ հեռու, ճգնելու եւ  
աղօթելու յարմար վայր մըն է վանքին հիմ-  
նուած տեղը, միայն որոտընդոտ զետն է,  
որ զերեզմանային լուսութիւնը կը խանգարէ:  
Եկեղեցին նուիրուած է սուրբ Աստուածածնի  
եւ ունի երեք մատուռ՝ Ս. Գէորգ, Ս. Սար-  
գիս եւ Ս. Մերերիոս (Բիւզանդիոն, 1900,  
Թ. 1158): Տաճարին լայնութիւնն է՝ 24 ոտք,  
իսկ երկայնութիւնը՝ 305: Ունի լուսամուտ  
եւ 3 խորան: Ունի նաեւ բնկուղաչէն դուռ  
մը, որուն վրայ կը նկատուի ՆՂ Թուականը  
(Նախանեան, Արտուր Հայաստանի, էջ 193—  
194): Կամարի մը վրայ կայ՝ «Զիւնող սորին  
Հայր Կարապետ» (Աշխատանք, 1911, էջ 765)  
1421ին հոս կը թաղուին հապէշազգի նահա-  
տակ քահանաները (Հայոց նոր վկաները,  
Վաղարշապատ 1903, էջ 251, Հմմտ. Նօ-  
տարք, էջ 65):

Հոս գրուած են բաւականաչափ ձեռա-  
գիրներ եւ Խիզանի մէջ արտագրուած շատ մը  
գրչագիրներու մէջ է. խորան սուրբ Աս-  
տուածածինն ալ յիշուած է:

Այսպէս 1425ին կը գրուի Սաղմոսի մեկ-  
նութիւն մը՝

«Արդ ես վերջինս խնդրող բանի՝  
Որ եմ տրուել յամենայնի,  
Փափագանօք զտառս զրեցի,  
Նեղ եւ անձուկ ժամանակի  
Ընդ հովանեաւ Աստուածածնի,  
Որ Բարի Ձոր անուն կոչի  
Ի թուականիս ութհարիւրի  
Եօթանասուն եւ չորս ամի...  
Չեռամբ... Թոմայի»:  
(Նօտարք, էջ 78):

Յիսուն տարի յետոյ (1475) Կարապետ  
կը գրէ աւետարան մը (Բիւզանդիոն, 1900,  
Թ. 1158): Շատ ժամանակ յետոյ (1600ին)  
Գրիգորիս կ'արտագրէ Եւսերի Եկեղեցական  
Պատմութիւնը՝ «Ի դառն եւ ի նեղ ժամանա-  
կիս, յորում նեղիմք ի յանօրինաց եւս ա-  
ռաւել ի սովոյ, որ ԹՃ գրամ ալիւր եւ  
յԹ. Փարայ գնեցինք (Ակինեան Հ. Ն., Հա-  
ւարուան Յիշատակարանաց, էջմ. 1903.  
Հմմտ. Կար. Յուլ. Թ. 1682): Այս ժամա-  
նակները — 1601ին եւ 1605ին — կը գրուին  
երկու Աւետարան, որոնց առաջինին մէջ  
Բարեբրդի Խաչատուր, կը մագթէ յիշել եւ  
ողորմի ըսել՝ «ստացողի... աւետարանիս  
տէր Աստուածատուր կրօնաւորին... նաեւ  
հոգեւոր եղբարցն եւ միարանիցն իւր Բար-  
սեղ քաջ ըտրունապետին եւ Վարդան ար-  
հեպիսկոպոսին եւ տէր Կարապետ հէրպետին  
եւ այլ կրօնաւորացն եւ տէր Յովանէս աւաղ  
երիցուն» (Լայպեհանց, Յուլ. ց. հայ. Չեռ.  
Վասպ., էջ 799. Արարատ, 1911, էջ 215—  
217. Մտրտեան, Երնջակ, 308—309):

Վարդան Ղարասուեցին 1663ին կը նօ-  
րոգէ «աւետարանս ի խնդրոյ Բարսղի եւ Զա-  
նաղի», որոնք կը գնեն զայն «ի դուռն Բարի-  
ձորոյ Ս. Աստուածածնին» (Ակինեան Հ. Ն.,  
Հաւարուան Յիշատակարանաց յամն 1663):

Հիզանցիներու սիրած սրբավայրերէն  
եւ ուխտատեղիներէն էր Բարիձորոյ վանքը:  
Տօնի օրն էր Համբարձման Հինգշաբթին, երբ  
հոճ բազմութիւն մը հոն կը փութար եւ մե-  
ռած վանքը գոնէ մէկ օրով յարութիւն կ'առ-  
նուր: 1879ին վանահայր էր անհոյն Մար-

գարէ, իսկ 1901ին Արրահամ քահանայ Նա-  
հապետեան (Արեւելք, 1901, Թ. 4806 եւ Ար-  
տուր Հայաստանի, էջ 193—194): Ժողո-  
վրդէնէ ընտրուած Հոգաբարձութիւն մը կը  
վարէր անոր բաւական ընդարձակ հողն ու  
անտառը<sup>18</sup> (Շէրենց, Սրբավայրեր, էջ 140—  
141. Արեւելք, 1901, Թ. 4806 եւ Բնաշխ.  
Բառարան, էջ 403): Քիւրտերը անոր կա-  
րասինները կը յափշտակեն (Մշակ, 1878,  
Թ. 187): 1895ին կը կողոպտուի (Արարատ,  
1896, էջ 246):

9. ԳԱՄԱԿԵԼԻ ՎԱՆՔԸ

Խիզանի (Աղձնեաց) Գղեղ դաւառակի  
մէջ, (Յ)էկու գիւղի արեւմտեան կողմը,  
Մնղենց գիւղի մօտ, Այդեձոր կոչուած գե-  
ղեցիկ վայրին մէջ կառուցուած է Ս. Գամա-  
ղիէի հուշակաւոր վանքը<sup>19</sup>, որ ունի մարուր  
օգ, բայց նուազ ու տաք ջուր: Անոր եկեղե-  
ցին դմբէթաւոր է, հոյակապ ու սիրուն (Լու-  
սնայ, 1900, Ա. էջ 222) Հաղիւ 16 ոտք լայն եւ  
17 ոտք երկար (Նախանեան, Արտուր Հայաս-  
տանի, էջ 196):

Հիմնարկութեան նկատմամբ հին կոն-  
գալի մը մէջ կայ՝ «Յորժամ սուրբ առա-  
քեալն (Թաղէոս)... դարձեալ եկն ի յայս,  
որ է Խիզան, ունելով ընդ իւր զգլուխ  
սրբոյն Գամաղիէլու, որ բերեալ էր յերկիր  
Խիզան, զոր ինքն կամեցաւ եւ տեսեալ  
զվայրն, որ կոչի այդեձոր յոյժ ազնիւ եւ  
վայելուչ եւ եղ անդ զբոլոր սկաւառակն, որ  
է գլուխ Գամաղիէլին եւ շինեաց վայելուչ  
եկեղեցի յանուն Աստուածածնայ եւ եղ անդ  
մասն ինչ ի կենաց փայտէն, արար վանք եւ  
տեղիս ճգնաւորաց, որ կայ հաստատ մինչև  
ցայսօր (անդ, էջ 196):

Թէեւ աւանդութիւնը մեծաստանին հիմ-  
նարկութիւնը մինչև Առաքելներու օրերը

<sup>18</sup> Հոս յաւելում նաեւ որ Խիզանի Բալիձորոյ  
վանքի մէջ 1594ին ի յիշատակ Կարապետ վարդապետի  
կը գրուի Մովսէս Խորենացոյ Պատմութիւն մը եւ կը  
նուիրուի Վարապայ (Հմմտ. Բնաշխան Հրատարակու-  
թիւն Ս. Խորենացոյ Պատմութեան, Տիպիս 1913,  
էջ 107): Նոյն է սա Բարիձորի հետ: Բարիձորի  
(Ս. Մերկերիոսի) վանքին եւ մերձաւոր ուրիշ քանի  
մը վանքերու (Ս. Գամաղիէի, Շերի Ս. Գէորգի,  
Ապարանից Ս. Խաչի եւն) մասին համառօտ տեղեկու-  
թիւններ տեսնել կալ՝Տօկեցի Պետրոս Ծ. վարդապետի  
«Արիական ճանապարհորդութիւն ի հայրենիս» երկին  
մէջ (Կ. Պոլիս 1881, էջ 51—59):

<sup>19</sup> Ինչպէս Գամաղիէի վանքը, նմանապէս այս  
բաժանումի մէջ յիշուած ուրիշ քանի մը վանքեր  
կրնան նաեւ Բաղէշի վանքերու մէջ դասուիլ, եւ ու-  
րերէնք՝ Ռչտունիքի կամ մերձաւոր դաւառներու:

կը տանի, սակայն անոր մասին ստորջ տեղեկութիւններ կան ժ.Ե. ժ.Ե. դարերէն: Հոս 1397ին կը գրուի Տօնական մը (Բարձրագոյն, 1898, էջ 30) եւ ուրիշ գրութիւններ, որոնց յիշատակագրութիւններն իրենց կարեւորութեան պատճառով կ'ուզեմ յատուկ բերել:

1. Յիշատակարան Ծնորձալոյ Մատթէի մեկնութեան՝

«Փառք... ի ստացունէն եւ ի վայելիս դերապանձ եւ մեծ բարունապետին Յովհաննիսի (կը գրէ Յովհաննէս կրօնաւոր): Այլ եւ զՍտեփանոս կազմող սորայ եւ զթուղթս այլ կոկեաց եւ զմիարան եղբարքս մեր զԱէթ եւ զԹորոս եւ զԴաւիթ (յաւելեալ «եւ կիրակոս եւ զԱնդրանիկն»), որք աւղեական եղեն մեզ: ...Արդ զրեցաւ... սա ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյս Գամաղիէլի, որ կայ աւրնթեր Խիզան քաղաքիս ի խնդրոյ սուրբ եւ առաքինաջան վարդապետի Յովհաննիսի... թվ. ՊԵԺ երրորդ» (1371) (Ա.Կինեան շ. Ն., Հաւաք. Յիշատակարանաց էջմ. Թ. 2610):

2. Յայտաւարք մը 1407ին կը գրուի.

«Փառք... Արդ զրեցաւ տառս այս ձեւամբ յոգնամեղ եւ անարճեստ գրչի Յովհաննէս քահանայի ի Հիզան քաղաքի, ընդ հովանեաւ սրբունւոյ Աստուածածնիս եւ քաջ զօրավարացն Սարգսի եւ Գէորգայ ի թուականին Հայոց ՊԾԶ. ի հայրապետութեան տեան Դաւիթ Աղթամարցոյ... ի խնդրոյ Պօղոս կրօնաւորի պատուական արեղայի...: Ես Պօղոս կրօնաւոր որդի Քօչքէկի, ետու պայտաւորքս ի սուրբ ուխտս, որ Գամաղիէլ կոչի, որ է ի վաւատին Հիզանայ եւ ի վիճակ սորա՝ յորում եւ բնակութիւն իմ աստ է: Յատաջնորդութեան սուրբ ուխտին Ներսէս վարդապետի եւ Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Դաւիթ... վկայութեամբ սիրելի հօրս մեր ճերունի վարդապետին Ներսէսի եւ առաջին պատճառի բարեացս այս հոգեւորի Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Դաւիթ եպիսկոպոսի, որ կարդան եւ յիշատակեն զմեզ եւ զմերսն ի դուռն սուրբ եկեղեցոյս Գամաղիէլի...: Անդ դեմ՝

Եւ զառաջնորդս այս սուրբ ուխտի (Գամաղիէլի)  
Կցորդ փառացղ արա մեծի  
Զվարդապետս մեր բարի,  
Որ եւ Ներսէս անուն կոչի  
ԶՍտեփաննոս ընդ տէր Դաւիթի,  
Զեպիսկոպոսքս նապելի

Եւս եւ զստացող այս սուրբ տառի,  
Որ եւ Պօղոս անուն կոչի  
Եւ զիւր ճնողսն որ ըստ մարմնի՝  
Զհայրն Քօչիկ ընդ Զօհարի»:

(Նօտարք, էջ 26—27. Հմմտ. նաեւ Զարրհանէլեան, Պատմ. հայ. դպրութեան, Բ., էջ 153):

3. Գ. Տաթևացոյ Բարդաղբքի յիշատակարանը՝

(Թղ. 378բ՝) «Փառք... եւ արդ ես... յետնեալս ի շարս քահանայապետից Ստեփաննոս անուամբ այցելու պիտակ բանիւ եւ ոչ զործով: Գրեցի ձեռամբ իմով զսուրբ տառս յիշատակ Պետրոս կրօնաւորի, որ եւ զճողիս քրեւորդի: Եւ ճնողաց իւրոց Յուսուֆին եւ Էլիսաթանի...: Բայց զրեցաւ ի թուարեութեանս մեծի, ութ արիւրի եւ վաթսուն եւ երկրորդի ամի յաստուածապահ եւ բարեհոգի սուրբ ուխտս, որ Գամաղիէլ առաքելոց անուամբն յորջորջի ի վաւատին Հիզան քաղաքի...: Նաեւ զյիշատակի արժանաւորն զհօգեւոր հայրս մեր, որ եւ մարմնոյ արեանասու մեղ՝ զՆերսէս վարդապետս եւ ճնողսն իւր, որ է մեզ տածող հոգեպէս եւ մարմնապէս... այլ եւ ուսուցիչ եւ խրատիչ յիշման արժանի առնել: Այլ եւ զՎարդան եպիսկոպոսս եւ զայլ միեղէն եղբարքս, որ կան հաւաքեալ ի դուռն սուրբ տաճարիս...: Արդ ես Ստեփաննոս եպիսկոպոս աղաչեմ... յիշման արժանի առնել զիս զանարժանս եւ զճնողսն իմ զԿիրակոսս եւ... եւ զեղբարսն իմ:

(Անդ՝ թղ. 449բ). «Փառք... Արդ յանդ էլեալ կատարեցաւ սուրբ տառս... ձեռամբ Ստեփաննոս եպիսկոպոսի եւ զայս չափաւորս եւ զրեցի Յովհաննէս պիտակ անուն բարունի... յիշատակի վասն, մեզ եւ ճնողաց մերոց եւ եղբարց՝ Յակոբի եւ Պետրոսի սրբասնունդ կրօնաւորաց... նաեւ վարդապետաց մեր Յովհաննէսի եւ Կիրակոսի...: Այլ եւ զՄկրտիչ կրօնաւոր եւ զառաջնորդ սուրբ ուխտին, որ է կազմող մատենիս: Բայց զրեցաւ սա ի սուրբ եւ բարեհոգի ուխտս որ Սուրբ Խաչ կոչի յերկրիս Հիզան քաղաքի ի թու. ՊԿԳ. (1414): Դարձեալ զմեր միարան եղբարքս եւ զհամաշունչ որ կան ի դուռն սուրբ տաճարիս նախ Աւետիս վարդապետս եւ Բարսեղ գրոց աշակերտ: Ներսէս: Ատոմ: Գրիգոր: Յակոբ: Յովհաննէս: Եւ Յովհաննէս: Մարտիրոս: Դաւիթ: Յակոբ:

Իսկ հանդուցեալքն Կիրակոսս եւ Յովհաննէս միակեացն...: Այլ եւ զՆերսէս երէց ծաղիկ սորին եւ զճնողսն իւր յիշեցէք:

Թվ. ՊՀԳ զնեցաւ ի Ստեփաննոսէ յորդոյ Հայրապետ քահանայի եւ Նաղիսաթունի (Ա.Կինեան շ. Ն., Հաւաքունի Յիշատակարանաց էջմ. 2063):

4. Աւետարան՝ 1427ին գրուած՝

«Եւ արդ ես ունայնս ի բարեաց զործոց, սուտանուն գրչակս Յովհաննէս... զրեցի զսա, զսուրբ Աւետարանս ի վանքս որ կոչի Գամաղիէլ, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոյն Գամաղիէլի եւ ամենայն սրբոցս... ի յառաջնորդութիւն վանացս բարունւոյս մերոյ Ներսէս բանախնդրի եւ յեպիսկոպոսաց մերոց տէր Ստեփաննոսի եւ տէր Վարդանի եւ տէր Դաւիթ...: Եւ ի յայլ միեղէն եղբարքս Պօղոսուն, Ստեփաննոսին, Դաւիթին, Յովաննիսին, Սարգսին, Մխիթարին, Յովսէփին եւ անտես Մխիթարին...: Արդ զրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՀԶ» (1427: Նօտարք, էջ 82—83):

5. 1437ին «ի կաթողիկոսութեան հայկական Տեառն Տեառն Կոստանդեայ Կիլիկեցոյ ի վանքս որ Գամաղիէլ կոչի, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի» աւետարան մը գրուի «ձեռամբ յոգնամեղ Յովհաննէս վարդապետի (Կրպէ, Կարս քաղաքը, Մոսկուա, էջ 98):

6. Հաւանորէն նոյն Յովհաննէս կ'աւարտէ ձառոց մը՝ «յաստուածարեակ վանքս, որ Գամաղիէլ կոչի, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի, ի թուականութեանս Հայոց ՊՂԱ. (1442) ի հայրապետութեան Տեառն տէր Կիրակոսի...: Դարձեալ Յովհաննէս վարդապետս աղաչեմ զսրբութիւնդ ձեր յիշեալիք զիս զզօրաւոր սորա» (Նօտարք, էջ 128):

7. Աւետարան՝ գրուած 1445ին՝

«Արդ ես ունայնս ի բարեաց... (Յովհաննէս վարդապետ) զրեցի զսա սուրբ աւետարանս ի սուրբ ուխտս որ կոչի Գամաղիէլ ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Գամաղիէլի...: Արդ զրեցաւ սուրբ աւետարանս ի թուականիս Հայոց ՊՂԳ. ի դառն եւ ի նեղ ժամանակիս... ի յառաջնորդութիւն վանացս Դաւիթ եպիսկոպոսին եւ բարունւոյս մերոյ Յովհաննիսի եւ այլ միարան եղբարքս կրօնաւորացս՝ Ստեփաննոսին՝ Յովհաննէսին, միւս Յովհաննէսին՝ Սարգսին, միւս Սարգսին...: Աստուած ողորմի ասացէք Ստեփաննոս քահանային, որ ետ զսուրբ աւետարանս ի դուռն սուրբ Գրիստափորին ի զիւզն որ կոչի Սորի» (Նօտարք, էջ 145):

8. Աւետարան՝ գրուած 1455ին՝

«Արդ կատարեցաւ աստուածախոս աւետարանս ձեռամբ Յովհաննէս բանախնդրի ի խնդրոյ նորարդորջ քահանային տէր Փիլիպոսի... ի վանքս որ Գամաղիէլ կոչի, ընդ հովանեաւ Առաքելոյս Գամաղիէլի եւ այլ սրբոց, որ աստ կան ի յառաջնորդութիւն վանացս Յովհաննէս վարդապետի եւ Դաւիթ եպիսկոպոսի եւ այլ կրօնաւորացս Յովհաննէսին եւ միւս Յովհաննէսին, Մխիթարին եւ Յովաննէսին եւ մահապատ Սարգսին եւ միւս Սարգսին, Ղազարին, Կարապետին եւ Յովհաննէսին, որ յայտ ամի առաջնորդ կարգեցաւ վանուցս: Արդ զրեցաւ սուրբ աւետարանս ի թուարեութեանս Հայոց ՊԳ ի դառն եւ ի նեղ ժամանակիս» (Նօտարք, էջ 181):

9. Աւետարան՝ գրուած 1468ին՝

«Եւ արդ ես (Պաղար) ... զրեցի զսա — զսուրբ աւետարանս ի վանքս որ կոչի Գամաղիէլ ընդ հովանեաւ առաքելոյս Գամաղիէլի եւ ամենայն սրբոցս, որ աստ շուրջ զմիօք բանակեալ կան ի յառաջնորդութեան վանացս բարունոյս մերոյ Յովհաննէս վարդապետի եւ Դաւիթ եպիսկոպոսի եւ ի յայլ միեղէն եղբարքս Սարգսին եւ Կարապետին, Գրիգորին եւ Յովհաննիսին, Կիրակոսին եւ Սուքիասին եւ Ստեփաննոսին, Յովհաննիսին եւ միւս Յովհաննիսին եւ Ներսէս փոքր երիցուն: Զոր Տէր Աստուած խաղաղական կենաւ պահեսցէ զնոսս մինչեւ ի խորին ճերութիւն. ամէն: Արդ զրեցաւ սուրբ աւետարանս ի թվականիս Հայոց ՊԺԷ» (1468) (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 452):

10. Աւետարան յԱղթամար գրուած 1469ին՝

«Այլ եւ զրեցաւ սուրբ աւետարանս ի դուռն Գամաղիէլի սուրբ առաքելոյս ձեռամբ յոգնամեղ Յովհաննէս վարդապետի ի թվարեութեան Հայոց Ձ եւ ԺԸ (1469) ի յառաջնորդութեան վասն այս (վանացս) Յովհաննէս վարդապետի եւ Գրիգոր եպիսկոպոսի, զոր Տէր Աստուած պահեսցէ զսոսս ընդ երկայն աւուրս ամէն: Եւ յայլ միարան եղբարքս Ղազարին, Սարգսին, Սուքիասին, Ստեփաննոսին, Յովհաննէսին, միւս Յովհաննէսին, Յովհաննէսին եւ Ներսէսին եւ այլ եղբարք մի

Առաքելին՝ Յակոբ անուն...» (Լալայեանց, Յուլյ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 454—455):

11. Մաշթոց մը կ'աւարտի՝ «ընդ հո- վանեաւ սուրբ տաճարիս, որ յանուն սուրբ Գամաղիէլ առաքելոյն կառուցեալ կայ...: Աստուած լուսաւորէ զՅովհաննէս վարդա- պետի հոգին, որ զմեզ կերակրէ (կերա- կրեաց) ի դրել սորա» (Թորոս Աղբար, Բ., էջ 254—255, յիշատակարանս դրուած է ՋՀԵ Թուին (1526) եւ ոչ թէ ՌՀԵ Թուին 1626. հմմտ. Արարատ, 1919, էջ 4):

Այս յիշատակարանները շատ պայծառ կը ցուցնեն, որ ԺԳ—ԺԶ դարերու մէջ Գա- մաղիէլի վանքը ստուգիւ ծաղկած չըջան մը բոլորած է: Կիրակոս կաթողիկոսի ընտրու- թեան կը մասնակցին նոյն վանքէն համանուն երկու Յովհաննէս վարդապետներ (Թ. Մե- ծով. յիշատակարանը, էջ 53): Իսկ ա- նոնցմէ յառաջ Ստեփանոս վարդապետը զԺԲախտութիւնը կ'ունենայ Պետրոս քահա- նային հետ քրիստոնէական հաւատքն ուրա- նալու, բայց ետքէն զեղջի դալով դառն մա- հուամբ կը նահատակուի (Հայոց Նոր Վկա- ները, էջ 245—260):

Գամաղիէլի վանքին տեղապահ վանա- հայրն էր 1884ին Յովհաննէս Խիզանցին (Արեւելք, 1884, Թ. 214), իսկ անկէ յառաջ վանահայր էր Վարդան քահանան (Նաթա- նեան, Արտուր Հայաստանի, էջ 196): Այս վանքին տէր կ'ըլլան Քիւրտերը եւ զայն կը կողոպտեն (Լուսայ, 1900, էջ 222, Արարատ, 1896, էջ 246 եւ 423. հմմտ. եւ Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, էջ 448):

10. ԳԵՂՍՈՒ ԿԱՄ ԿԵՂՍՈՒ Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ԵՒ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԵՐԸ

Մոկսի սահմանակից Սպակերտ գաւա- ռակի Գեղիս կամ Կեղիս գիւղը ունէր երկու վանք՝ Ս. Կիրակոսի վանքը, ուր զուցէ 1432ին Յովհաննէս արեղայ Մաշթոց մը կը դրէր (Նօտարք, էջ 100) եւ որ Քիւրտե- րու յախճատութիւններու կ'ենթարկուի եւ 1895ին ալ կողոպուտի (Մշակ, 1878, Թ. 187, Նօտարք, էջ 99, ծն. 1, Եէրենց, Արբաւայ- րեր, էջ 152—153, Արարատ, 1896, էջ 246, Էփրիկեան, Բնաշխ. Բառարան, էջ 508) եւ Ս. Յովհաննէսի վանքը, որ գիւղին հարաւա- կողմը կառուցուած էր եւ հոյակապ շէնք մըն էր (Լուսայ, 1900, էջ 227):

11. Ս. ԳԵՈՐԳԻ ԿԱՄ ԱԼԻԱԶԱՅ ՎԱՆՔԸ  
Ս. Գէորգի կամ Ալիազայ վանքը Մոկսի Առնջու ձորի հարաւակողմը՝ սարի մը լանջ- քին բարձրացած է: Ունի զեղեցիկ անտառան եւ դեռ կանգուն տաճար, բայց շարաթացեալ (Բիւզանդիոն, 1904, Թ. 2230):

12. ԳՆԻԿԱՆԻՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ՍԷՐԷՅ ՎԱՆՔԸ

Մոկս գիւղաքաղաքէն բաւական հեռու, անոր արեւմտեան կողմ, լեռան մը սրտին կը գտնուին Գնիկանց գիւղն ու վանքը: Գիւղն ու վանքը իրենց անունը ժառանգած են Ս. Հովիտիմէի Գինէ ընկերուհիին ա- նունէն, որ հոն մեռած ու թաղուած է: Վանքը տաճար մը ունի յանուն Ս. Գէորգի, որ նաեւ Ս. Նշան կոչուած է: ԺԳ. դարուն Յովհաննէս կը դրէ Աւետարան մը ի Գնի- կանց՝ Ս. Նշանի եւ Ս. Գէորգի հովանիին տակ (Լալայեանց, Յուլյ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 259): Վարդան արեղան 1447ին կ'ար- տադրէ Աւետարան «ի յերկիրս Մոկաց ի գեաւոս Գինէկանց ընդ հովանեաւ Ս. Նշանիս եւ սուրբ Գէորգայ» (Ակինեան Հ. Ն. Հաւա- քունն Յիշատակարանաց. Տէր Աւետիսեանի, Յուլյ. Նոր Զուլայի, Թ. 54) իսկ 1508ին Մա- րտի կ'օրինակէ ուրիշ աւետարան մը (Լա- լայեանց, Յուլյ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 633— 635):

Գնիկանից վանքը կրնար տրամադրել բաւականաչափ վարելահողերու, արօտա- տեղիներու եւ անտառներու վրայ: Անոնց տնտեսութիւնը Աղթամարէն նշանակուած անձի մը յանձնուած էր (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199):

13. ԳՌՈՒՋ ՎԱՆՔԸ

Մոկսի Յիրայ Ս. Աստուածածնի մօտերը, Ասկնջաւս գիւղի քովերը կայ Գոռուզ անուն սրբավայր մը<sup>20</sup>, որ զուցէ վանք եղած ըլլայ: «Տաճարը ցարգ կանգուն է, բայց շարաթա- ցեալ է» (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199): Տօնի օրն է Կարմիր կիրակին:

14. ԴԵՐՃԿՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Խիզան գաւառի Սեղ կամ Սեխ գիւղի արեւելեան կողմը, անկէ քառորդ ժամ հե-

<sup>20</sup> Ուրբաթադրբի մը մէջ կը յիշուի «Գոռուզու սուրբ Նշան» (Տաշեան, Մայր Յուլյակ, էջ 879):

ու, բարձ լեռան մը կատարը կը տեսնուի ԴէրՃիւու կամ ԴերՃիւու սուրբ Աստուածածնի վանքը<sup>21</sup>: Տաճարը 60 ոտք քառակուսի է, ունի երեք խորան եւ մեծ լուսամուտ: Կա- թողիկէն կիսակործան: Դարպասը՝ 50 ոտք քառակուսի: Այս եւ յարակից շինութիւններն աւերակի վերածուած: Վանքին կոնդակը կորսուած: Աւանդութեան համեմատ շի- նուած է Կոստանդինէն (հմմտ. Ապարանից սուրբ Խաչ): Քիւրտերը զրուած են վանքը եւ զայն ապականած — Ս. Կարապետի հետ (հմմտ. Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 183 եւ 202 եւ Լուսայ, 1900, էջ 222 եւ Բնաշխ. Բառարան, Բ., 174. Բիւզանդիոն, 1900, էջ 1127 եւ Արարատ, 1896, էջ 90):

15. Ս. ԵՐԱՇԵԱՒՈՐԻ ՎԱՆՔԸ

Խիզանի Ծիկարայ կամ Ծօկուայ գիւղի արեւմտեան կողմը: Կողոպտուած Քիւրտերէ (Լուսայ, 1901, Ա., էջ 222 եւ Արարատ, 1896, էջ 89):

16. ԶՕՐԱՎԱՐԻ (ԶՕՐԱՒՈՐԻ) ԿԱՄ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ ԵՒ ԶՕՐԱՎԱՆՔԸ

Մոկսի մէջ Առնջու ձորի հիւսիսային եղերքը: Աւելի ճղնարան քան վանք: Ունե- ցած է շատ մը սուրբերու մասունքներ: Իր մասուուը 1801ին Մխիթար Առնջեցին շինած է (Բիւզանդիոն, 1904, Թ. 2230): — Գուցէ նոյն ըլլայ Զօրավանքի հետ, ուր ամփոփուած է Եղիշէի զլուխը (Աղբր. Հանդ., 1911, էջ 144, հմմտ. Վասպուրական-Վանի վան- քերը, Ա. մաս, 1940, էջ 148 եւ Սալնոյ ձորի վանքերը՝ զալ անդամ): — Կամըջաձորի Ս. Աստուածածնի վանքն ալ Զօրավանք կո- չուած է:

17. Ս. ԽԱՉԻ (ՇԻՆԻ ԶՈՐԻ) ՎԱՆՔԸ

Խիզանի Շինի ձոր գիւղին արեւելեան կողմը — անտառախիտ լեռան մը գլուխը կանգնած է Ս. Խաչի վանքը, որ Խիզանի ա- նունի մենաստաններէն է (Լուսայ, Ա. 1900, էջ 222): Տաճարը 60 ոտք քառակուսի է եւ երեք խորան ու երկու վերնատուն ունի: Գմբէթը բարձր է ու զեղեցիկ: Հինգ լուսա- մուտով օժտուած է: Դարպասին լայնու-

<sup>21</sup> Տարբեր վանք է ԴերՃիկի Ս. Աստուածածնի վանքը որ Սալմաստի մէջ է: Անոր մասին պլուր:

թիւնն է 50 ոտք եւ երկարութիւնը 20 ոտք: Երկու սեղան եւ մէկ պատուհան ունի: Ար- տաքին շէնքերը նորոգած է Սահակ վանա- հայրը, որուն օրով Քիւրտերը վանք կ'աւա- րեն (Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 175—176, 192—193): Մարդպետունին 1901ին «Արեւելք»ի մէջ (Թ. 4806) կ'ար- տայայտուէր թէ՛ սենեակէ մը զատ, ուր Պետրոս Գրիգորեան Աղթամարցի վարդա- պետ վանահայրը կը բնակէր, միւս բոլոր շէնքերը քայքայուած են: Ձեռնարկ կ'ըլլայ զայն որրանոցի վերածելու եւ իրապէս ալ քանի մը որբեր հոն կը հաւաքուին (Բիւզան- դիոն, 1899, Թ. 938. Արեւելք, 1901, Թ. 4806):

Վանքին կոնդակին համեմատ զայն Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ Թագաւորը հիմնած են եւ Ս. Խաչ կոչուած է, վասն զի Ս. Խաչի մասունքով ձոխացուած է (Նա- թանեան, Արտուր Հայաստանի, էջ 175—176, 192—193):

Դաւիթ Աղթամարի կաթողիկոսի օրով կը ծաղկի. անունն է իր միաբաններէն՝ Գրիգոր Խլաթեցի եւ Յովհաննէս վարդա- պետ (Բիւզանդիոն, 1900, Թ. 1195): Այս- պէս կ'արտայայտուի Խ. Լեւոնեան, որ սա- կայն չ'ապացուցաներ իր խօսքը որ եւ է տե- զիք յիշելով:

Հաւանօրէն այս վանքին մասին է հե- տեւեալ յիշատակագրութիւնը՝ «Փառք... զրեցի հրամանաւ եւ օժանդակութեամբ բա- բունեացս մերոց Յովհաննիսի եւ Կիւրակոսի ... ուխտի սրբում հոչակաւոր նախաւանդ տանս առաջնորդք յատուկ անուամբ սուրբ Խաչ անունեալ...: Գրեցաւ առ ի թվ. ՊԼԷ (1388) ի գաւառիս Սպարկերտ ընդ հովա- նեաւ սուրբ Ստեփաննոսի Նախավկայի...» (Ակինեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Էջմ. 1144. Ն. Լամբ. մեկնութիւն Առակաց. հմմտ. Կար. Յուլյ. 1103):

Յաջորդ յիշատակարանին մէջ, որ 1401ին գրուած Մաշթոցի մը մէջ կը գտնուի, կը յիշատակուին միեւնոյն Յովհաննէս եւ Կի- րակոս վարդապետները — իբրեւ ուսուցիչ- ներ դրէին: Հոն պայծառ կերպով յիշուած է Ս. Խաչ ի Խիզան եւ որովհետեւ Սպարկերտ կամ Սպարկերտ Խիզանի մաս կազմեր է հե- տեւարար այս երկու կէտերը կու գան հաս- տատելու մեր վարկածը թէ հաւանօրէն վե- րոյնչեալ յիշատակարանը Խիզանի Ս. Խաչի մասին է:

Ահա Մաշթոցի յիշատակարանը.

«Ձատացող եւ զվայելող մատենին զտէր Գրեղոր եպիսկոպոս Մովսէս... Հայրն երկնաւոր անփորձ... պահեսցի... ընդ սմին եւ զհարազատ եղբայրն իւր զԹուսայ կրօնաւորն եւ առաջնորդ սուրբ ուխտին, որ սուրբ Սաշ կոչի եւ մականունն սուրբ Կանանց վանք: Գրեցաւ ի սուրբ եւ ի հոգեկաւոր ուխտս սուրբ Սաշ յորջորջեալ ի դաւառիս Խիղան քաղաքի ձեռամբ անարհեստ գրչի Յովհաննիսի բանի խնդրողի ի թիվ. ՊԾ: Յամի ձեռնադրութեան տէր Գրեղորի...: Յիշեալք զամենայն վերոյգրեալքս ի սմայ եւ զսուրբ հարազատ եղբարքն իմ զՅակոբ եւ զՊետրոս կրօնաւորք հանդուցեալք ի դուռն սուրբ Սաշիս: Եւ զՄկրտիչ կրօնաւոր եւ առաջնորդ սուրբ ուխտիս: Ձկազմող տառիս եւ զգրտաճառ կենաց իմոց եւ զճնորդսն իւր: Նայել զուսուցիչքն մեր զՅովհաննէս եւ զԿիրակոս վարդապետք որ էին առաջնորդք սուրբ ուխտիս...: Յայսմ ամի եկն թանձր մարախ եւ աւերեաց զբազում տեղիս եւ զդաւառս» (Ակիւնեան շ. Ն., Հաւաքումն Յիշատակարանաց, էջմ. 898. հմմտ. Կար. Յուց. Թ. 981):

Սոյն Յովհաննէս<sup>22</sup> արտագրած է եւ Ագաթանգեղոս մը, որուն յիշատակարանն ալ իր կարեւորութեան համար հոս յառաջ կը բերեմ.

«Փառք... որ ետ կարողութիւն տկար անձին իմոց զբել զպատմութիւն երկից երանալ եւ երջանիկ հօրն մերոյ սրբոյն Գրեղորի Լուսաւորչին ի սուրբ ուխտս որ սուրբ Սաշ յորջորջէ, յերկիրս Հիղան քաղաքի ի թուին ՊԾԱ (1402): Ես Յովհաննէս զձազրեցի ձեռամբ իմով, որ յետինս եմ ի շարս բանասիրաց անուամբ հոետոր կոչեցեալ եւ հանձարով եւ վարուք վերջնտանալ յիշել... եւ զճնորդս իմ զԱլեքսան քահանայն...: Եւս առաւել զբազմերջանիկ հարքն մեր զՅովհաննէս եւ զԿիրակոս վարդապետք, որ էին առաջնորդք սուրբ ուխտիս եւ մեզ տաճողք հագւոյ եւ մարմնոյ... եւ զմիեզէն եղբարքս մեր, որ ի սուրբ Սաշի դուռս հաւաքեալ կան, զՄկրտիչ հայրպետ եւ ինձ արեանասու զհօրեղբարսն զՊետրոս եւ զՍտեփաննոս կրօնաւորք եւ զայլ եղբարք զԲարսեղ, զԱւետիս,

<sup>22</sup> Յովհաննէս հետոր կոչուած է եւ «թուի թէ սոյն Յովհաննէս վարդապետն է նոյն իսկ առաջնորդ Հիղոյ Ս. Սաշի ուխտին» (Նոտարք, էջ 17. հմմտ. եւ Բիւզանդիոն, 1900, Թ. 1195):

զներսէս եւ զԿիրակոս վախճանեալ, զՊետրոս, զՅոհաննէս, զՍտեփաննոս, զՄարտիրոս, զԳրեղոր, սարկաւազ որ զթուղթ խաղէր եւ զՅակոբ զպլիւր եւ աշակերտ եւ զայլ ամենայն միարան եղբարքս, որ մեզ կամարար են եւ ձեռնասու ի գործս բարիս» (Նոտարք, էջ 17):

Նոյն փութաջան գրչադիրը — Յովհաննէս — 1413ին<sup>23</sup> կը գրէ Գրեղոր Տաթևացոյ Բարողադիրքը եւ կ'աւելցնէ ընդարձակ յիշատակարան մը, որուն մէջ բազմաթիւ անձերու յիշատակութիւնը կ'ընէ՝

«... Բայց զբեցաւ (սա՛ Բարողադիրք Գր. Տաթևացոյ) ի ՊԿԲ ամի (1413) յաստուածապահ եւ մեծախառ եւ զերահոգակ ուխտն, որ սուրբ Սաշ յորջորջի ի դաւառիս Հիղան քաղաքի: Եւ կամք մեք ընդ հովանեալ ամենազօր Աջոյ ձեռնին Աստուծոյ եւ պահպանութեամբ աստուածընկալ սուրբ Սաշիս Բրիստոսի: Նաեւ զյիշատակի արժանաւորան զհոգեւոր հարքն մեր զՅովհաննէս եւ զԿիրակոս բարունիք, որք էին մեզ տաճողք հոգեպէս եւ մարմնապէս...: Այլ եւ զմերս միարան եղբարքս, որք կան հաւաքեալ ընդ հովանեալ սուրբ Սաշիս՝ կուսակրօն եւ սրբասնեալ եղբարքս մեր նախ եւ առաջին գրոց որդիքս Աւետիս, Բարսեղ եւ ապա այլքն ամենեքեան՝ Ներսէս, Պետրոս, Յակոբ, Գրեղոր, Յովհաննէս, Ստեփաննէս, Յոհաննէս, Մարտիրոս, Առաքել, Դաւիթ, Յակոբ: Եւ հանդուցեալքն Կիրակոս կրօնաւորն եւ Յովհաննէս միակեցն եւ աշակերտն մեր (Յովհաննէս գրչի) Գրեղոր, որ յայսմ ամի փոխեցաւ առ Բրիստոս Աստուած: Նաեւ այլ միարանք, որ կան ի դուռն սուրբ եկեղեցոյս մեծաւ յուսով եւ սպասեն անձառ խոստմանցն Աստուծոյ...»:

(Անդ՝ Աւետեաց քարոզին սկիզբը) «Ձյեռինս ի շարս բանասիրաց զՅովհաննէս զրիչ պիտակ անուամբ եւ... զՄկրտիչ կրօնաւոր առաջնորդ սուրբ ուխտիս (Ս. Սաշի), որ զնամակս շնորհեաց... յիշման արժանի աննէք... ՊԿ թվ. սկսաք Աստուածով» (գրել):

<sup>23</sup> Մեկթիսեղեկ 1410ին նոյն գրքը կ'արտագրէ «Եւ արդ ես Մեկթիսեղեկ պիտակ անուն խնդրող բանի զձեզի ձեռամբ իմով... ի բրիստոսաշէն քաղաքս Հիլան կոչեցեալ ընդ հովանեալ... աստուածընկալ խաչին Բրիստոսի» (Ակիւնեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. էջմ. 2076). 1414ին կը գրուի Գրեղոր Տաթևացոյ Բարողադիրքը «Երեկին Հիղան ի հոգեկաւոր ուխտն սուրբ Սաշ ի Ստեփաննոս եպիսկոպոսէ (Կարենեան, Յուց., Թ. 2058):

(Անդ՝ Ի վերջ Մկրտութեան քարոզին) «Ձերջանիկ եւ զիսաւաւորեալ բարունիք մեր զՅովհաննէս եւ զԿիրակոս զվերափոխեցեալսն ի Բրիստոս ուղիղ հաւատով... յիշման արժանի աննէք...»:

(Անդ՝ Յորի քարոզին վերջը) «Ձառաջնորդ սուրբ ուխտիս զՄկրտիչ կրօնաւոր եւ զճնորդսն իւր եւ զհոգեւոր եղբարքս մեր եւ զորդիքս՝ զԲարսեղ, զԱւետիս, զներսէս, զԱտոմ, զՊետրոս, զՅոհաննէս, զՍտեփաննոս, զԳրեղոր, զՅակոբ, զՄարտիրոս, զՅոհաննէս, զԱռաքել կրօնաւորք եւ զայլ միեզէն միարան եղբարքս... եւ զյետնեալս ի շարս բանասիրաց զՅոհաննէս ծրոյս եւ զեղբարսն... յիշելոյ արժանի աննէք» (Նոտարք, էջ 42—43):

Հաւանորէն այս յիշատակարանին մէջ յիշուած Ստեփաննոսն է որ 1420ին<sup>24</sup> «ընդ հովանեալ սուրբ Աստուածածնի եւ սուրբ Սարգսի եւ որդւոյ նորա Մարտիրոսի եւ սուրբ Գէորգոյ, որ է սակաւ մի հեռի» (Խիղանէ, հմմտ. Նոտարք, էջ 18) կը գրէ Աւետարան մը եւ վերոյիշեալ Աւետիս ու Ներսէս միարանները յիշել կը մագթէ՝ «Եւս առաւել զհոգեւոր եղբարս իմ զերջանիկ եւ զընտրեալ կրօնաւորքն զհարազատ եղբարքն իմ զԱւետիս վարդապետն եւ զներսէս կրօնաւորքն եւ զհոգեւոր զաւակն մեր զՍուրբաս կրօնաւորն...» (Նոտարք, էջ 63): Սոյն Ստեփանոս զեւ ուրիշ արտագրութիւններ ալ ունի (հմմտ. Նոտարք, էջ 44 եւ նախորդ ծանօթագրութիւնը):

Այսպէս այս յիշատակագրութիւնները կ'ապացուցանեն թէ՛ Մկրտիչ առաջնորդի հսկողութեան տակ Ս. Սաշի վանքը բարգաւաճ վիճակ մը կը վայլէ եւ վանքին պարձանքներէն է Յովհաննէս վարդապետը:

Շատ ժամանակ վերջ — 1750ին — Ստեփանոս վարդապետն այս տեղեկութիւնը կուտայ՝ «Ես Ստեփանոս վարդապետս եկա Խիղանս սուրբ Սաշն պետ էր միարան լինէի, որ է առաջնորդ սուրբ աթոռիս Սահակ աստուածարան վարդապետն այժմիկ կառավարէ զժողովուրդն. թվին ՌՃՂԹին Յունիսի Ժ եւ Եին գրեցաւ ձեռամբ իմով» (Ակիւնեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, Թ. 376, Յիսուս որդի):

<sup>24</sup> Չ. Պատուրեանին ծանօթ է Բերականի մը մեկնութիւնը՝ «Գրեալ ի վանս Ծղակա եւ ի վաներս Խիղանայ ընդ հովանեալ Ս. Աստուածածնին եւ սուրբ Սաշին, ի թվ. ՊԿԳ» (Ակիւնեան շ. Ն., Հաւաք. Յիշատ. 1415): — Ծղակայ վանքին մասին այլուր:

Նորագոյն վանահայրներէն կ'արժէ յիշատակել Սահակ վարդապետը, որ վանքին իրաւունքներուն եւ հողերուն քաջարի պաշտպանը հանդիսացած է (Մասիս, 1873, Թ. 1413, Մշակ, 1878, Թ. 187, Նաթանեան, Արտուր Հայաստանի, էջ 175):

Ս. Սաշի վանքը ունեցած է շատ հոգ ու հօտ եւ ասոնք եղած են այն զիւրիչ խայծերը, որոնք այլազաւան հարեւաններու աչքն ու սիրտը անոր վրայ քաշեր են, բնական է՝ ի փասս (Շէրենց, Սրբափայեր, էջ 137—139):

18. Ս. ԵԱԶԻ (ՍՕՁՎԱՆԻՅ) ՎԱՆՔԸ

«Շատախ թաղի արեւմտեան բարձրակատար լեռան փոքրիկ սարահարթի վրայ կասուցվել է սրբատաշ քարերից երկու փոքրիկ խորաններից եւ մի տաճարից բազկացած Սօզվանից Ս. Սաշ վանք, մօտիկ համանուն Սօզվան զիւրի» (Շէրենց, Սրբափայեր, էջ 145): Տաճարին մէջ եւ խորաններուն տակ կրօնաւորներ թաղուած են: Տապանաբարբու վրայ զժրախտարար զիր չկայ եւ կամ ժամանակի ընթացքին աւրուած են: Վանքին շուրջն ալ զերեզմաններ կան: Անոր տօնակատարութեան օրերը Կանանչ Կիրակին եւ Հոգեգալուստ եղած են (անդ, էջ 145):

19. Ս. ԵԱԶԻ (ԳՐՄԵՆԻՅ) ՎԱՆՔԸ

Շատախ հին աւանի արեւելեան կողմը, Գաբանայ ձորի արեւմտեան ծայրը, Տիգրիսի աջ ափին ծառատունկներու եւ այգեստաններու մէջ հիմնուած է Բրմենից սուրբ Սաշի վանքը: Աւանդութեան համեմատ Վասպուրականի անդրանիկ վանքն է: Թագէսս եւ Բարդուղիմէոս առաքելները «անցնելով Գաբանայ ձորով... պատահում են այստեղ Բրմատան եւ Բազինների, յաջողվում է նոցա խորտակել կոպաշտութեան արձանները եւ տեղը կանգնեցնել Ս. Սաշն Փրկչական: Եւ ահա այն օրուանից այդ Բազինեաց վայրը կոչվել է Բրմենից վանք» (Շէրենց, Սրբափայեր, էջ 147): Տօնակատարութիւնը Սաշի վերացի օրը կը կատարուէր (անդ, էջ 147):

20. ԵՆՁՈՐՈՒՏԻ ՎԱՆՔԸ

Այս վանքը Ռմրոնց զիւրի մօտ, Խնձորուտ զիւրի (ի Խիղան) արեւելեան կողմը՝ բարձր տեղոյ մը վրայ կառուցուած է:

Վանահայրենիքն կը յիշուի Մովսէս քահանայն եւ այն 1404ին՝ «... Տեսեալ զսորայս անձաւ փրկագործութեան խորհուրդն, բարի արժատոյ շառաւիղն, ողջախոհ եւ կուսակրօն քահանայն Մովսէս եւ հայր վանիցն, որ կոչի Սնճուրուտի վանք... ետ դրել զսա (Աւետարան) յիշատակ հոգւոյ իւրոյ» (Նօտարք, էջ 22—23 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ.ի, էջ 291)։ Սոյն վանքը 1654ին առատ նուիրատուութիւններու կ'արժանանայ (Լալայեանց, անդ, էջ 288—291)։

Աղթամարի իրաւասութեան ենթակայ եղած է եւ Քիւրտերէն կողպատուած (Լուսիս, 1900, էջ 222. Նօտարք, էջ 23, ծն. 1. Բնաշխ. Բառարան, Ա., էջ 522. Արարատ, 1896, էջ 90)։

21. ԽՈՍՐՈՎԱՅԻՆ Ս. ՆՇԱՆԻ ԿԱՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Ս. Նշանի կամ Ս. Աստուածածնի, նմանապէս Սոսորովային Ս. Նշանի վանքը աւանդութեան համեմատ Սոսորով Անճրեւացիէն Շատարի փէրզանդաշտ կամ Փեանդաշտ դաւառակի Նար գիւղի մօտ հիմնուած է (Բիւզանդիոն, 1903, Թ. 2031)։

Վարդան 1430ին Աւետարան մը կը գրէ՝ «Ի սուրբ ուխտս, որ կոչի Հոսրովայ վանք, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս Հոսրովային սուրբ Նշանիս եւ Աստուածածնիս եւ առաջնորդ սուրբ ուխտիս Մկրտիչ քահանային եւ այլ միարան եղբարցս, որ աստ կան հաւաքեալ» (Նօտարք, էջ 94 եւ Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ.ի, էջ 358—361)։

22. ԽՈՒՍԻԱՆԿՈՍԻ ԿԱՄ ԱԿՆՎԱՇՏԱՅ ՎԱՆՔԸ

Մոկսի սրբավայրերէն է նաեւ Անկնդաշտ գետին արեւմտեան եզերքը բարձր բլուրի մը վրայ շինուած Ս. Աստուածածնի մենաստանը<sup>25</sup>, որ Սոսուանդոսի վանք եւս կոչուած է, որովհետեւ կ'աւանդուի թէ՛ Ս. Սոսուանդոս հոս բնակած ըլլայ (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 145, հմմտ. եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, էջ 85)։ Օժտուած է սքանչելի տեսարանով, անոր մէկ կողմը կը բարձրանայ պուրակազարդ լեռ մը եւ

<sup>25</sup> «Նօտարք»ի հեղինակը կը գրէ՝ «Մերո գիւղիս է վանքն Անկնդաշտայ, շինեալ ի վերայ բարձր գրից, ի ներքոյ սորին մի արտասով հետաւորութեամբ է եւ չէ, կայ այր մի ուր է ակն եւ աւազան յորդ գետին Մոկայ, ինճ թուի թէ յանուն ական գետոյս եւ զուխտս Անկնդաշտայ վանք յորձրեալ են» (էջ 62)։

միւս կողմը զով ու զուլալ դեռ մը կը խշխշայ։ Քարակերտ տաճարը դեռ կանգուն է, միայն մէկ անկիւնը փրատուած, իսկ յարակից շէնքերուն հիմերը լոկ մնացած։ Շատոնց շարաթացեալ է, թէեւ բաւականաչափ վարելահող, արօտավայր եւ անտառ ունեցած է (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199. տեսնել Հանդ. Ամս., 1942, էջ 169)։

23. ԾԱՂԱՎԱՎԱՆՔԸ

Սօղվան գիւղին հիւսիս-արեւմտեան կողմը ծաղկաւէտ լեռներու երկու լանջերու վրայ կը կանգնուէր Ծաղկավանքը։ Իր շուրջն՝ ամէն կողմ խինդ ու խանդ, ծաղիկ ու հոտ եւ այս պատճառով Ծաղկավանք անուանուած։ Բայց ինքը այսօր աւեր ու աւերակ։ Անցեալէն մնացած են միայն հաստատուն որմերը։ Բաւականաչափ վարելահող, անտառ ու անդ ունէր։ Բայց չունէր ուխտապնացութեան որոշեալ օր, վասն զի գրեթէ ամէն օր ծաղկատի երխտասարդութիւնը հոն կը փութար (Շէրենց, Սրբավայրեր, էջ 146)։

24. ԾԱՓԱՆԻՅ Ս. ԱՏԵՓԱՆՈՍԻ ԿԱՄ Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Մոկսի արեւելեան վերջին սահմանին մօտ, Առնոսի շղթաներէն մէկուն մերձ եւ Մօսիանց գիւղի քով՝ շարաթացած վանք մը (Բիւզանդիոն, 1904, Թ. 2230. հմմտ. եւ Աղղր. Հանդ., 1913, Բ., էջ 30)։

25. Ս. ԿԱՆԱՆՑ ԿԱՄ ԾԱՅԱՏԻ ԿԱՄ Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ

Մոկսի հարաւ-արեւմտեան կողմը՝ Առուանից ձորի մէկ եռանկիւնածեւ բաժանումին գլուխը, բարձր լեռան մը քով, Արկանց գիւղի մօտերը աչքի կը զարնէ Ս. Կանանց «մեծափառ անապատ»ը, որ ազաւաղուելով կոչուած է լոկ Արկանց կամ Արկանց Ս. Կարապետ։ Անուանուած է նմանապէս Ս. Սաշ։ Կ'աւանդուի թէ Հոսիփոսի մեաններն<sup>26</sup> այս կողմերէն անցած տեսն գիւղ մը կ'իջեանին, որ իրենց անունովը Ս. Կանանց կը կնքուի<sup>27</sup>։ Հոս անոնք մատուց

<sup>26</sup> Հմմտ. Մատենադարանի Վ. Խորենացոյ, Վեներիկ 1865, էջ 300 եւ Տաշեան, Մայր Յուլ., էջ 63։  
<sup>27</sup> 1355ին գրուած Աւետարանի մը յաւելեալ յիշատակարանին մէջ կայ՝ «ՊԶԲ (1433) ի յերկիր Մոկոց ի գիւղս, որ կոչի Մուրրկանց ընդ հովանեաւ սուրբ Գէորգոս զօրավարին» (Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ.ի, էջ 205—207)։

մը կառուցանել կու տան եւ Ս. Սաշի մասունք մը կը զետեղելով զայն սուրբ Սաշ կ'անուանեն<sup>28</sup>։ Բայց ետքէն սուրբ Կարապետ կը կոչուի, որովհետեւ հոն կը բերուի Յովհաննէս Կարապետի մատուցած մը եւս, որ ապա արծաթեայ սակեղօծուած աջի մը մէջ կ'ամփոփուի<sup>29</sup> եւ վրան ալ այսպէս կ'արձանագրուի՝ «Շինեցաւ սուրբ Աջ Յիւրեցի Գրիգոր վարդապետին, յիշատակ է ի Սրկանից սուրբ Կարապետին. թուին ՌՄԽԳ (1749, Բիւզանդիոն, 1903, Թ. 2199)։

Վարդան Աշխարհապետը կը գրէ՝ «Մոկայ գաւառն է իշխանանիստ, ուր կան բազում վանորայք, նախ Ամենաիրկիլին, ուր կար գլեղեղման թագաւորին մոզուց Գասպարայ եւ սուրբ Վարդանայ եւ սուրբ Կանանց վանքն, որ այժմ սուրբ Սաշ ասի, ուստի էր Անանիա կաթողիկոսն (Saint-Martin, Mémoires II, էջ 428 եւ էջ 466) Հ. Ինճիճեան (Մտորագրութիւն, էջ 136) սա զիտողութիւնը կ'ընէ սոյն խօսքերու նկատմամբ՝ «Ի ձեռադիրս չիք յիշատակութիւն այնչափ վանօրէից, այլ այսչափ միայն թէ կան ի նմա՝ Բազում վանորայք եւ մեծ ուխտ Ծայտո, ուստի էր Անանիա կաթողիկոսն»։ Ասկէ կարելի է հետեւեցնել որ Ծայտո եւ Ս. Կանանց կամ Ս. Սաշը վանքերը միեւնոյն վանքն են (Եւ ուսկէ էր Անանիա կաթողիկոսը)։

Ս. Կանանցի տաճարը քարակերտ է եւ շատ հոյակապ, լայն ու ընդարձակ։ Նման շէնք մըն է եւ դարպասը, որ չորս քարակերտ սիւներու վրայ հաստատուած է եւ կամարակապ դուռ մ'ունի։ Մնացած է արձանագրութիւն մը, որ է՝ «ԳՏԷՐ Գրիգոր շինող եկեղեցւոյս զՅովհաննէս եւ զԹամա եւ զԼազար յիշեցէք ի Քրիստոս ՊԾԷ» (1408)։ Վանքին յարակից շէնքերը մասով մը կանգուն են եւ նորոգուած։

«Այս վանքն ըստ զըջագիր յիշատակարանաց ատենօք մենաստան մը եղած ըլլալով՝ ունեցած է բազմաթիւ կրօնական գրչա-

<sup>28</sup> Հոսիփոսի մեանց Պատմութեան համեմատ (հմմտ. Խորենացի, Պատմ. Հայոց, էջ 300) այս տեղ արդէն սուրբ Սաշ կը կոչուէր եւ հոն «մեծ սքանչելիս կատարեայ Աստուած ի ձեռն պատուական եւ սուրբ խաչին»։  
<sup>29</sup> Ս. Կանանց վանքի մէջ Ս. Կարապետի եւ Ս. Ամենաիրկիլի մատուցներէն երկու կտոր — դաստակի ոսկիներ — գրուած են արծաթեայ սուրբի մը մէջ (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199)։

գիր մատենաներ, որոնցմէ դժբախտարար 500 տարու աւետարան մը եւ 280 տարուան Մաշթոց մը մնացած է» (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199)։ Յաւալի է նաեւ որ վանքին մասին շատ քիչ յիշատակարաններ կան եւ իր պատմութիւնը մութ կը մնայ։ Ծանօթ են ինճ հետեւեալ երկու յիշատակագրութիւնները<sup>30</sup>, որոնք վանքը մեծապէս կը զրուատեն։ «Կաղմեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ մեղոսթաւալ Առաքելի ի յերկիրս Մոկայց ի մեծափառ եւ ի հոչակաւոր երկնահանգէս եւ վայելուչ սուրբ ուխտ(ի)ս, որ սուրբ Կանանց վանք կոչի, ընդ հովանեաւ սուրբ Սաշիս եւ սուրբ Կարապետիս... ի թուականութեանս Հայոց Ռ եւ ԻԸ» (1579, Լալայեանց, Յուլ. հայ. Ձեռ. Վասպ., էջ 577—578)։ Դարձեալ՝ Ստեփանոս վարդապետ՝ ի վայելումս Կարապետ եպիսկոպոսին կը գրէ աւետարան մը՝ «Ի երկիրս Մոկայց ի մեծափառ եւ հոչակաւոր անապատիս, որ Ս. Կանանց վանք կոչի՝ ընդ հովանեաւ սուրբ Սաշին եւ սուրբ Կարապետին ի թվ. ՌԻԵ<sup>31</sup>» (1586, Ակիւնեան Հ. Ն., Հաւաքում Յիշատակարանաց, ի հաւաքմանէ Գեղամ էֆէնտիի)։

Ս. Կանանց կամ Ս. Սաշի<sup>32</sup> վանքը Աղթամարի իշխանութեան ենթակայ էր եւ Արսէն վարդապետը զայն կը շէնցնէ։ Հարուստ էր վարելահողերով, արօտավայրերով եւ անտառներով։ Վարդավառի եւ Վարազայ Ս. Սաշի կիրակիներուն հոն բազմաթիւ ուխտաւորներ կը համախմբուէին եւ իրենց նուէրները կու տային (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199)։

26. ԿԱՐԱՎԵՐԱՅ ՎԱՆՔԸ

Փեանդաշտի գաւառակի մէջ. 1895ին կողպատուած (Արարատ, 1896, էջ 247)։

<sup>30</sup> Հմմտ. յիշատակարան մըն ալ Խիզանու Ս. Սաշի հատուածին մէջ։ Հոն 1401ին այս վանքին վանահայր կ'անուանուի թովմաս վարդապետը։

<sup>31</sup> Ասոնցմէ շատ յառաջ՝ 1380ին՝ «Ի գաւառս Մոկայց ի վանս որ կոչի սուրբ Կանանց ընդ հովանեաւ սուրբ Սաշիս... ձեռամբ Նահապետի» կը գրուի Շայի մը (Հանդ. Ամս., 1923, էջ 73)։

<sup>32</sup> Ծանօթ է Կարօս-խաչի ժողովրդական քանդակարանի յիշատակը եւ յայտնի է թէ՛ «Պօզման Մոկսի հայ ժողովուրդի հոգոյ ստեղծագործութիւնն» է (Արարատ, 1917, էջ 558) սակայն դժբախտարար կարելի չէ ըսել թէ «Կարօս-խաչի անցքը» (անդ, էջ 559) ստուղակէս ո՛ր պատահած է՝ Մոկսի թէ Աղրակի մէջ եւ այս գաւառներու մէջէն ո՛ր վանքի (թէ գիւղի) խաչի վրայ է երբը։

27. ԿՃԱԽԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՄ ԲԱՒԱՅ ՆԱՐԵԿԱՅԻՒ ՎԱՆՔԸ

Կը գտնուի Մոկսի Նանենից Ս. Մինաս վանքին հարաւակողմը, Կճա(յ) զիւղի մօտերը, ձորակի մը եզերքը — շրջապատուած անտառներով: Վանքին դմբէթաւոր տաճարը զեռ թէեւ կանդուն է, բայց բոլորովին խալխլած: Կամարաղարդ է եւ քարաշար զոյգ սիւներու վրայ հանդհած: Անոր զբան վրայ կայ՝ «Ի Թվականին ՌՃԾԲ (1703) եղև շինումն այս տաճարին ձեռամբ Զաքարիայ վարդապետին՝ Աստուծոյ եւ Թեմի յիմաթով (օգնութեամբ), Աստուած ողորմի ասպետ կողին (պատճառ եղողին) ամէն:

Տաճարին հարաւային պատին կից կայ դաւիթ մը, որուն արձանադրութիւնն է՝ «Ի Թվականին ՌՄԸ (1659) եղև շինումն այս դաւիթին ձեռամբ Յովհաննէս վարդապետին»:

Գարսամն ու յարակից շէնքերն աւերուած: Ունի սուրբ աղբիւր մը, Զերմուկ կոչուած: Անշարժ կալուածներով օժտուած էր (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199 եւ 1904, Թ. 2230):

Հոբիփմեանց պատմութենէն ծանօթ է թէ՛ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կճաւի մէջ կը հաստատէ «վանս» (Մ. Խորենացոյ Մատենադրութիւնք, Բ. տպ., Վենետիկ 1865, էջ 300 [Պատմութիւն Հոբիփմեանց], հմմտ. Ինճիճեան, Ստորադրութիւն, էջ 136): Նմանապէս ծանօթ է՝ «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացոյ, զոր զրեմցի ի հոյակապ ուխտն Կճաւայ վանս կարծեացն անիծելոց Թոնրակեանց Յանէսի եւ Յամբէսի, որ եկն զգեստիւ ոչխարաց եւ ի ներքոյ զայլ յափշտակող, որ եւ ի պողոյ ծանուցաւ ամենից, զոր սուրբ վարդապետին լուեալ, զրեաց սակս ադատութեան ի չար կարծեացն» (հմմտ. Բաղմալէպ, 1893, էջ 59 եւ այլուր): Այնպէս գուցէ կարելի է հետեցնել սոյն թղթին բովանդակութենէն թէ՛ «Ժ. դարուն Կճաւայ եւ Նարեկայ վանքերն իրարու նախանձրնդդէմ գիրքի մէջ էին եւ կամ այն վանահայրն (Կճաւայ) ստուգիւ իր միաբանութեան մէջ եւս տարածել կ'ուզէր թոն(դ)րակեան աղանդը»<sup>33</sup> (անդ, էջ 61):

<sup>33</sup> Կճաւայ վանքէն բոլորովին տարբեր վանք է Կոնքոսայ վանքը (հմմտ. Հանդ. Սմա., 1941, էջ 75), որ 1415ին կը դրուէր Յովհ. Վանականի Յորայ մեկնութիւնը (Բաղմալէպ, 1913, էջ 146):

28. ԿՈՒՃՂՈՒՅ ԿԱՄ ԿՈՒՃՈՂԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Մոկսի հարաւային սահմանին վրայ, Ս. Կանանց վանքի հարաւ-արեւմտեան կողմը, անկէ երկու ժամ հեռու, Մոկաց դեպի արեւմուտքը կանդնուէր է այս վանքը, որ Թուխ մանուկ անուն քարուկիւր փոքրիկ տաճար մը եւ ընդարձակ անտառներ պարտէզներ ու արօտավայրեր ունէր: Կը վերաբերէր Աղթամարի (Բիւզանդիոն, 1903, Թ. 2199):

29. ՀԻՋԱՆՈՒ ՀԷԳՈՒԱՅ ԿԱՄ ՀԱՅԿԱՅ ՎԱՆՔԸ

Այսպէս կոչուած է այս վանքը զանազանուելու համար Վանի Հայկայ վանք Ս. Աստուածածինէն եւ Հայոց-ձորի Խէզայ կամ Հայկավանքէն: Հինդ-խորան վանքէն քիչ մը հեռու էր եւ ունէր անշուք եւ խարխուլ շէնքեր, բայց ընտիր վարելահողեր (Շէրենց, Սրբավայրեր, էջ 139—141):

30. ՀԻՆԳ ԵՈՐԱՆ ՎԱՆՔԸ

Հիլան գաւառի հարաւ-արեւելեան կողմը բարձր լեռնադաշտի մը սարահարթին վրայ կառուցուած է Հինդ խորան վանքը, յանուն հինդ նաւակատեաց, եւ արդարեւ կենդրոնի խորանէն գառ եկեղեցոյ աջ ու ձախ կողմերը կան զեռ չորս փոքրիկ խորաններ՝ սրբատաշ սպիտակ քարերով կերտուած: Տեղացիներու աւանդութեան համաձայն այդ խորաններու տակ անյայտ նահատակներ թաղուած են եղեր: Նաւակատեաց օրերուն պատարազ հոս կը մատուցուէր եւ բաղմաթիւ ուխտաւորներ կը համախմբուէին ու գառնուկներ մատաղ կ'ըլլուէին (Շէրենց, Սրբավայրեր, էջ 139):

31. Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ՎԱՆՔԸ

Խիլանի Ռմբոնեց գիւղի հիւսիսային կողմը: Քիւրտերէն ազարակի վերածուած (Լուսայ, 1900, էջ 222):

(Շարունակելի:) Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

